

1887-6

№ 89 ԳՅԱԼՎԱՆԱ ԳՐԱԴՐԱՆՆ № 89

ՏԵ. Գ. ԴՈՒՐՐՈՎԻՆ

# ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱԼ ԶԻԱՀ ՄԱՍԻՆ

ԽԱՐԱԿՐՈՒԹՅՈՒՆ Խ. ԲԵԿԱՆԻ

ՀՐԱՑԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՓՈՂԿՈՄԱԾԻ

ՅԵՐԵՎԱՆ - 1930

ՁՈՒ. Գ. ԴՈՒԲՐՈՎՆԻ


636.1

Դ

Ի Չ Զ Պ Ե Տ Տ Մ Ա Ն Ա Լ  
Զ Ի Ս Ո Ւ Տ Մ Ա Ս Ի Ն

A 1624  
1948

Խ Ա Ր Ա Գ Ա Ր Ա Բ Ի Ա Ր Ա Բ , Ա . Բ Ե Կ Ե Ա Ն Ի :



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՈՂՔՈՒՆԿՈՒՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ - 1930

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՎՄԱՆ  
ՊԱՏՎԵՐ 2269  
ԳՐԱՆԵՐՊԼԱՆՎԱՐ 1641(բ.)  
ՏԻՐԱԺ 1500

## ՅԵՐԿՈՒՀԻ ԽՈՍՔ

Զիարուծության մասին ընդհանրապես և ձիու խնամքի, կերակրման և աշխատեցնելու մասին մասնավորապես՝ մենք գրականություն չունինք, մինչդեռ ձին այժմ մեր տնտեսության մեջ հեղափոխիչ նշանակություն ունի. դամդաղաշարժ յեզն ու գումեշը փոխարինվում են արագաշարժ ձիով: Այդ բացը, մասամբ, վերացնելու նպատակով մենք վորոշ հապավումներով և հավելումներով, հարմարեցնելով մեր պայմաններին, կարեւոր համարեցինք հրատարակել Յու. Գ. Դուքքովինի «ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԽՄԱՆԱԱ. ԶԻՈՒ ՄԱՍԻՆ» աշխատությունը հայերեն լեզվով: Բնագրից դուքս են զցված մի չարք, մեր պայմաններին անհամապատասխան և մեզ համար առորյա, հրատապ նշանակություն չունեցող հարցեր, ինչպես արտադրողների ընտրությունը (ռուսական պայմաններում), ձիերի դաստիարակություններ՝ ձիարշավների համար և այլն, նկատի ունենալով, վոր մեր ձիարուծական ձեռնարկումները հետապնդում են այլ նպատակներ.—ունենալ ազնվացեղ արտադրողներ՝ բաւծելու թե՛ հեծյալ-քեռնատար տիպի ձիեր՝ մեր լեռնային գոտիների համար և թե՛ ծանրաբարշ ձիեր՝ դաշտավայրի գյուղատնտեսական աշխատանքների համար, և բավարարել մեր Կարմիր Բանակի կարիքները:

Զի բարգմանված ման ձիարուծական կոռպերացիայի մասին գույնը: Այդ մասին, մեր պայմաններին համապատասխան՝ կիրատարակվի մի այլ գրքույկ:

Զիարուծության մասին յեղած բազմաթիվ գրեթերից մենք ընտրել ենք Յու. Գ. Դուքքովինի գիրքը, նկատի ունենալով, վոր այդ գիրքը իր մասշելիությամբ և ձիերի խնամքի ու պահպանության վերաբերյալ իր գործեական խորհուրդներով ավելի յե համապատասխանում մեր ընթերցողների և պայմանների պահանջներին, քան վորեւ մեկ ուրիշը:



ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԻԱԲՈՒՅԹԸ ՀԱՄԱՐ

I ԳԼՈՒԽ.

Ի՞նչո՞ւսի ԶԻ ՅԵ ՊԵՏՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ

Մեր գյուղական տնտեսության մեջ ճին բազմառեսակ և շափադանց ծանր աշխատանք և կատարում: Այդ պատճառով անհրաժեշտ է, վոր գյուղական տնտեսության մեջ բանող ճին լինի ուժեղ, դիմացկում, կը ի նկատմամբ վո՞չ պահանջկոտ, դյուրաշարժ, կայառ և միաժամանակ այնքան հեղ, վոր ութ տարեկան յերեխան ել կարողանա նրա հետ վարվել:

Այսպիսի ճին ընտրելն այնքան ել հեշտ չեմ, մանավանդ իմպերիալիստական և բազաքացիական պատերազմից 12 տարի հետո: Պատերազմը ձիերի մեծ կորուստ և պատճառել, իսկ պատերազմից հետո զեռնս փոքր և լավ և մատղաշ ճիերի թիվը: Ահա թե ինչու անհրաժեշտ և շատ զգույշ լինել և ճանաչել ճիռու բայն ու վատը, թե չեմ վատ ճին փոխանակ ողուտ բերելու դյուրական տնտեսությանը, կատարյալ պատռհամ կդառնա նրա համար:

Զիու սեռը.

Ամենից առաջ տեսնենք, թե վո՞ր ճին և գյուղական տնտեսությանը ձեռնը ստու՝ հովատակը (վորձ ճի), զամբի՞լը (եղ ճի, մաղյան), թե՞ կրտած ճին:

Հովատակն այն առավելությունն ունի, վոր բացի գյուղական տնտեսության մեջ բանելուց, կարող և ոգոտակար լինել նաև բեղմնավորման նպատակների համար, մանավանդ, յեթե հաջողվի լավ հովատակ դնել: Բայց այդ առավելության հետ հովատակն ունի այն պակասությունը, վոր աշխատանքի ժամանակ անհանդիստ և, վոչ մի բողեք նրանից աչք չի կարելի հեռացնել, արոտ չի կարելի թողնել նրան և ամեն հասուն մարդ չի կարող դեկագրել, իսկ փօքահասակների մասին խսոք անդամ չի կարող լինել: Այս անհարմարություններն ի չիք են զարմնում այն ողուտը, վոր կարող և ստանալ զյուղական տնտեսությունն՝ հովատակը բեղմնավորման նպատակների ծառայեցնելուց: Գյուղական տնտեսության մեջ աշխատեցնելու համար ավելի հարմար կլիներ կրտած ճի պահել: Կրտած ճիերը, սովորաբար, շատ հանգիստ են լինում աշխատանքի ժամանակ և այն առավելությունն ունեն, վոր ամբողջ տարին կարելի յե աշխատեցնել, մի բան վոր չի կարելի ասել զամբիկների մասին:

Ցեղական նպատակների ծառայող զամբիկներն աշխատանքից պատ պետք ե լինեն ծնելուց մեկ ամիս առաջ և վոչ պակաս, քան մեկ ու կեռ շարաթ ծնելուց հետո: Հաճախ պատահում ե, վոր զամբիկը ծնում և գարնանցանքի ժամանակ, իսկ ճիռու աշխատանքի այլպիսի ընդմիջումը ցանկայի չե անտեռ թյան համար:

Հովատակը (վորձ մին), բացի իր աշխատանքից, առանձին սպուտ չեղարող տալ տնտեսությանը, այդ պատճառով նա յել այնքան ձեռնոտու չեղյուղացում, մանավագ յեթե այդ գյուղացին ցականում և ձիարածությամբ պարագել և ունենալ իր պահած, խօսմած ձիերը: Մնում և զամբիկը: Թեհ վերեւում բերված պատճառներով զամբիկն անընդհատ չի կարող աշխատել տնտեսության մեջ, բայց այնուամենայնիվ ավելի ձեռնոտու յն զամբիկ պահել: Յեթե հաջողվի լավ զամբիկ ճարել, ապա նա, բացի տնտեսության մեջ զանազան աշխատանքներ կատարելուց, կծնի նաև մորուկներ (բուռակներ): Եերկու կամ յերեք լավ մորուկը կհանին զամբիկի գինը և կծածկեն նրա պահանձնած ծախըք: Խոկ զամբիկի աշխատանքը զուտ ոզուտ կմնա տնտեսությանը: Անհամաժեշտ և միայն զամբիկը բեղմնալորել ավելի շուտ, վորպեսզի ցանքի ժամանակ չծնի: Այսպես, ուրեմն, պետք և ընդունել, վորդյուղական տնտեսության համար զամբիկն ավելի ոզուակար և, քան հովատը:

### Հասակը.

Այժմ քննենք հարցի մի ուրիշ կողմը. շատ գյուղացիներ, մանավանդ սակագ բերը վայրէրում, աշխատում են ցածրահասակ ձիեր գնել, կարծելով, թե արդպիսի ձիերը ձեռնոտու յն տնտեսությանը, վորովհետեւ նրանց համար քիչ կեր և պահանջվում: Ցիշտ ե, վոր արդպիսի ձիերը քիչ կեր են պահանջում, բայց չպիտի մոռանալ, վոր նրանց ոված ոզուտն ել շատ չե: Ամենից առաջ պետք և իմանալ, վոր արդպիսի ձիերն ավելի թույլ են աշխատում, քան բարձրահասակ ձիերը, վորովհետեւ ձիերը բեռները քաշում են վոչ միայն իրենց ուժով, այլև իրենց քաշով. այդ պատճառով վորքան մեծ ծանրություն և ընկենում անուրի (խամութ) վրա, այնքան քիչ ույժ և պահանջվում ձիուց: Բայց չե՞ վոր ինչքան քիչ ույժ սպառի մին, այնքան յերկար կաշխատի նա, կնշանակի, այն ինչ վոր ավելի յն ծախազում կերի վրա, անողայման յետ և սոտցվում ավելի կատարած աշխատանքի միջոցով: Բացի դրանից, փոքրամարմին զամբիկը (եղ մին) ամեն մի հովատակով չի կարելի բեղմնալորել, վորովհետեւ անհամապատասխան հովատակ լինելուց վաս մտրուկներ կծնվեն: Վերջապես, բարձրահասակ մին միշտ ել համարյա մեծ քայլեր ունի, քան ցածրահասակը, և յեթե փոքրամարմին ձիով կարելի յն որական կես հեկտար հերեկել, ապա մեծաքայլ, բարձրահասակ ձիով համարյա մեկ հեկտար կարելի յն վարել: Այստեղից պարզ յերեսում ե, վոր բարձրահասակ մին ավելի ձեռնատու յե, քան ցածրահասակը: Բայց այսուել ել սահման կա: Զափաղանց մեծահասակ և ծանր ձին նորյանքան անձեռնոտու յե գյուղական տնտեսության համար, վորքան և փոքրահասակը: Մեծահասակ մին շատ շուտ նիշարում ե և գդվար և նրան նորից բռել (չաղացնել): Նա շատ քրտնում և հոգնում ե, խոկ լավ փափկացրած ցելում կամ ձյան մեջ վուներով թաղվում ե խորը և այդ պատճառով շուտ հոգնում ե:

Այսուեղից յերեսում ե, վոր պետք և գնել միջահասակ մի, այսինքն՝ բարձրությունը պետք և լինի 147 սահմարմերից վո՛չ պակաս և 150 սահմարմերից վո՛չ պակելի:

### Աշխատանքի տարիքը.

Խոսենք նաև ձիու տարիքի մասին: Շատերն աշխատում են ջահել ձի գնել, բայց քչերն են հասկանում, վոր ավելի լավ և ինը տարեկան մի ունե-

նալ, բայց առանց արատի, քան ունենալ չորս տարեկան Հիվանդում ձի: Ջորսից պակաս տարիք ունեցող ձի չպետք ե գնել, վորովհետև այդ տարին քում ձիերը դեռևս հասունացած չեն լինում և ամեն տեսակի աշխատանք չեն կարող կատարել, իսկ յեթե հարկադրված լինեն կատարել, ապա չուտ տով կանգնետքանան: Ձիու լավագույն տարիքն ե 4-ից մինչև 12: Ի հարկե, ավելի լավ և ջանել ձի գնել, իսկ յեթե կարիք լինի ընտրել կամ 8 և նույնիսկ 10 տարեկան ձի, բայց առողջ և առանց արատների (մանավանդ հաջող ծընող զամբրիկ) և կամ 4 տարեկան ձի, բայց արատավոր, ապա այսպիսի դեպքում միշտ ել խորհուրդ պիտի տալ գնել տարիքով ձին: Գուցե այդ տարիքով ձին 10 տարվա վորհարեն 5 տարի բանի, բայց հենց այդքան ժամանակում ել նա ավելի ողում կտա, քան հիվանդ ձին՝ 12 տարում:

## II Գլուխու.

### ԶԻԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այժմ, յերբ մոտավորապես գիտենք, թե անտեսության ի՞նչպիսի ձի յե հարկավոր, կարող ենք քննության առնել ձիու մարմնի մասներն առանձին-առանձին: Այս աշխատանքի ընթացքում պիտի սովորենք և հետո յել չըու-առնանք, թե ի՞նչը կարող է ողտակար լինել և ի՞նչը՝ վճասակար:

## Գլուխը.

Գլուխը պետք ե լինի վո՞չ մը-սալի, փոքր, լայն ճակատով, փոքր ականջներով, խոշոր և պարզ աչքերով (ակս նկ. 1):

Այդպիսի գլուխը նշան ե, վոր ձին հասկացող ե և լավ վարք ունի: Բնդհակառակն, նեղ ճա-կատ և մանր աչքեր ունեցող ձին լինում է չար և հաճախ՝ կամա-կոր (նկ. 2):


Մոտ գլուխ սովորաբար ունե-նում են ծույլ և զանգաղացարժ ձիերը (նկ. 3):

Չիու աչքերին և ականջներին նայելով, կարելի յե զազափար կազմել այդ ձիու առողջության մասին: Եեթե ականջները կախ-ված չեն և արադ դառնում են այն կողմը, վորանզից ձայնն և դալիս և մաքուր ու պարզ աչ-քերն ել զառնում են նույն կողմը, ապա այդ նշանակում ե, վոր ձին առողջ ե. իսկ յեթե ականջ-ները կախված են անշարժ և չեն դառնում այն կողմը, վորանզից ձայնն և լսվում, ապա այդ նշան է, վոր ձին հիվանդ ե (նկ. 4):

Նկ. 1. Լավ գլուխը



Նկ. 2. Չար և կամակար ձիու գլուխը.



Նկ. 3. Աստ զլախ.

չկա և յերբորդ՝ այն պատճառվ, վար ձիւրը յերբմն կծելու վաստ սովորություն են ունենաւ և այդ կարելի յէ իմանալ ատամների միջացով:

Կծելը ձիւր ամենավաստ սովորությունն է: Կծան ձին, յերբ գտնվում է դամում, սովորաբար ժամանակ առ համանակ ատամներով բանում ե մասուրի յեղբը և կոկորդով ջղային ցնցումներ և կատարում (կարծես՝ բժիկում է): Այդպես և անում ձին նաև ուսելու ժամանակ: Այսպիսի մին կերը վատ և մարսում և արագ նիշարում է:

Կծելու այս զզվելի սովորությունն անցնում է նաև այն ձիւրին, վորոնք պահվում են կծան ձիւր մաս: Տնակնության մեջ ամեննելին ցանկալի չեն կծանել, վորի այդ վատ սովորության մասին դժվար չեն իմանալ հենց զնելու ժամանակ: Կծան ձիւր բանիչ ատամներն առնելից մաշված են լինում և այնպիսի տեսք ունեն, ինչպես ցույց ե որպատճեն:



Նկ. 4. Հիվանդ ձիւր զլախը.

### Ինչպես Վորոշել տարիքը.

Ձիւր, ինչպես և մարդու կաթնատամները թափվում են և նրանց վոյարեն գուրս են գալիս մնայուն ատամները: Ձիւր ծնվելու որից մինչև 12 տարեկան հասակը ատամներն ավելի վատ չեն վկայում նրա (ձիւր) ատրիքը, քան անցագիրը: 12-ից մինչև 16 տարեկան հասակն արգեն ձիւր տարիքի մասին կարելի յէ զազափար կազմել մոտավոր կերպով, վուշ բոլորովին ճիշտ, իսկ 16 տարուց բարձր հասակում միայն փորձ-

<sup>9)</sup> Բե այդպիսի գեղքերում ձին ինչպիսի հիվանդություն և ունենաւ, այդ ժամանակ գործիքի ուրախ մասին մտու վերջուած:

գամ մարզը կարող է վորոշել տարիքը, այն ել մոտավորապես և վո՞չ բոլորին ճիշտ։ Զիու առջեմի ատամները (վեցական առամ վերին և ստորին ծընատների վրա) բաժանվում են՝ միջին կտրիչների (դասավորված են կտրիչ ատամների կողքերին) և ծայրատամները (օքրանք) (միջին կտրիչներին հաջորդող ատամները)։

Հովատակների և կրտած ձիերի ամեն մի ծննդուի վրա լինում են նաև 2 ժանիք, վորոնք գուրս են զալիս արդ ձիերի 4 և կես ատրիկան հասակում։ Մարուկի (քուուկը) ծնովնուց մի քանի որ անց գուրս են զալիս միջին կըսութիւնները և ժանիքները, վորոնք միջին 1½—2 ամիսը բավական աճում են, Ծալրատամները դուրս են զալիս 9-րդ ամսում և այլ ժամանակից ել սկսում են մաշվել կաթնատամների փոսիկները, այսինքն ատամի վերին ծայրի խորսթյանները (անսնկ. 6)։ 12-րդ ամսում բոլորումին մաշվում են միջին կտրիչների ատամների փոսիկները, 1½ տարեկան հասակում՝ միջին կտրիչների փոսիկները, իսկ 2 տարեկան հասակում՝ արդեն՝ բոլոր կտրիչները, և կաթնատամներն սկսում են թափվել ու նրանց տեղ գուրս են զալիս մնայուն ատամները (նկ. 7)։ Մնայուն ատամները կաթնատամներից տարրերգում են իրենց ձևով, ավելի մուգ գույնով և մեծությամբ։ Յերբ մարուկը դառնում և 2½ տարեկան նրա միջին կտրիչ կաթնատամները թափվում են, իսկ 3 տարին լրանալիս նրանց փոխարեն գուրս են զալիս մնայունները (նկ. 8, 10, 11)։ Յերեք և կես տարին լրանալու ժամանակ միջին կտրիչները (կաթնային) թափվում են և 4 տարին լրանալիս գուրս են զալիս միջին մնայուն ատամները (նկ. 9 և 12)։ 4½ տարեկան հասակում ընկնում են կաթնային ծայրատամները, իսկ 5 տարին լրանալիս գուրս են զալիս մնայունները։ Հինգ տարեկան հասակում լինում են բոլոր մնայուն ատամներն իրենց փոսիկներով (նկ. 13)։ Վեց տարեկան հասակից միջին կտրիչների փոսիկներն սկսում են մաշվել, վորոնք վերջնականացնեն մաշվում են յոթ տարին լրանալու ժամանակ (նկ. 14 և 15)։ 8 տարին լրանալիս մաշվում, անհետանում են միջին կտրիչների փոսիկները, իսկ 9 տարին լրանալիս անհետանում են նաև ծայրատամների փոսիկները (նկ. 16 և 17)։ Այժմ, ձիու տարիքն լիմանալու համար պետք են նայել վոչ թե ստորին ծննդուի, այլ վերին ծննդուի ատամներին։ Վերջիններիս վրա յիշ, ինչպես և ստորին ծննդուի ատամների վրա, կան փոսիկներ։ 10 տարին լրանալիս մաշվում, անհետանում են վերին ծննդուի միջին կտրիչների փոսիկները, 11 տարին լրանալիս՝ միջին ժանիքները, իսկ 12 տարին լրանալիս՝ անհետանում են նաև ծայրատամների փոսիկները։ ստորին ծննդուի ատամները ցույց են արված 18-րդ նկարում։

12 տարեկան հասակից սկսած, —ինչպես վերևում ասացինք, —ճիշտ տարեքը վորչել հնարավոր չե, այլ մոտավորապես միայն կարելի յե յեզրակաց-



Նկ. 5. Կծան ձիու վերին ատամները.



Նկ. 6. 9 ամսական մորուկի (բուռակի) տառամբը.




Նկ. 7. 2 տարեկան ձիռ. տառամբը.




Նկ. 8. 3 տարեկան ձիռ. տառամբը.




Նկ. 9. 4 տարեկան ձիռ. տառամբը.



Նկ. 10. 3 տարեկան ձիռ. տառամբը.




Նկ. 11. 3 տարեկան ձիռ. տառամբը.



Նկ. 12. 4 տարեկան ձիռ. տառամբը.



Նկ. 13. 5 տարեկան ձիռ. տառամբը.




Նկ. 14. 6 տարեկան ձիռ առամները.

Նկ. 15. 7 տարեկան ձիռ առամները.



Նկ. 16. 8 տարեկան ձիռ առամները.

Նկ. 17. 9 տարեկան ձիռ առամները.



Նկ. 18. 12 տարեկան ձիռ ստորին ծնոտի առամները.

Նկ. 19. 16 տարեկան ձիռ առամները.




Նկ. 20. 18 տարեկան ձիռ առամները.

Նկ. 21. 16 տարեկան ձիռ առամները.

նել, թե քանի տարեկան և տվյալ ձիս։ Այսուեղ դարձյալ կարող և ոզնել ստորին ծնուռը։ Ատորին ծնուռին նայելով հետ և, իսկ այդ տարբիներում ճիշտ վորոշել ձիու, տարփքը հնարավոր չե թե՛ վերին և թե՛ ստորին ծնուռներով։ 9 տարեկան հասակից սկսած՝ յերկայի տառեները կամաց-կամաց կուր մե են ստանում, իսկ 14 տարին լրանալիս սկսում են ձգվել գեղի հակառակ կողմը (բերանի խորքը)։ 16 տարին լրանալիս տառեներն ունեն 19-րդ և 21-րդ նկարներում ցույց տրված ձեր։ 18 տարեկան հասակում նրանք ե՛լ ավելի յեն ձգվում գեղի բնանի խորքը, իսկ 20 տարին լրանալիս դառնում են գրեթե յեռանկյուններ (նկ. 20) և սերտ կերպով մոռնենում են իրար (տես նկ. 22)։

Հիշելով այս կանոնները, պետք է ստուգել նրանց ճշտությունը հարեանի ձիու վրա և ապա միայն շուկա դուրս դալ ձիերի զնում կամարելու համար։




Նկ. 22. 20 տարեկան ձիու ստանումները



### Վիզը (Վարացու)

Զիու վիզը բավականաչափ լեռ-կար պիտի լինի և իրանին (մար-մնին) այնպես միացած, վար մնացվից գեղի վեր և թեք ուղղ զությունը ընդունի, ինչպես ցույցը և տրված 23-րդ նկարում։ Դյու. Նկ. 25. Զիու վիզը, յերք նման և պախայի վզին։ Պական անստեսության մեջ աշխա-




Նկ. 27. Ուզիու գավակ։

տելու տեսակետից ընդհանրա-ութեա ձիու վզի ձեռ և նրա զըր-վացքն առանձին նշանակություն չունեն։ Այնուամենայնիվ, զնելիս պիտի խուսափել այնպիսի ձիե-րից, վորոնց վիզը իրանին միա-նում և այնպես, ինչպես ցույց և տրված 24-րդ նկարում, վորով-հետեւ վզի ալոպիսի դրվածքը նշան և, վոր ձիու ուսերը բա-վականաչափ ամուր չեն։ Պիտի խուսափել նաև այնպիսի ձիերից, վորոնց վիզը նմանում և (նկ. 25) պախայի վզին։ Այդպիսի վիզ ունեցող ձիերը սավո-



Նկ. 23. Աղի լավ դրվածք, լավ մնալ, մեջք և զտովառել.




Նկ. 24. Աղի վատ դրվածք, նախած մեջք և ցածրադիր զտովառել.



Նկ. 25. Զիւռ մեջքը, յերբ նման և ուզուի մեջքին.

բարար տեսն տեղ չափից դուրս բարձրացնում են զլուխները և հաճախ սայ-  
թակում են (այդպիսի ձիերին քատզազուշակն են կոչում):



Նկ. 28. Կավ ընկած գավակ.



Նկ. 29. Լով, լայն և ուղիղ նետույթ.

### Մ Ա Դ Ա Վ Ր

Թեհ ձիու մնացավը գյուղական տնտեսության մեջ աշխատելու տեսակից յերկրորդական նշանակություն ունի, բայց և այնպես ցանկալիք յէ, վոր մնացավը լինի բարձր ու յերկար, ինչպես ցույց է տրված 23-րդ նկարում, վորովհետեւ այդպիսի մնացավ համարյա թե այն ձիերն են միայն ունենում, վորոնց կարճ ու լավ մեջք ունին, իսկ լավ մեջքը մեծ նշանակություն ունի թե՛ այն դեպքում, յերբ ձին ընտրում ենք ցեղական նպատակների ծառայեցնելու համար և թե՛ այն դեպքում, յերբ այդ ընտրությունը կատարվում է տնտեսության մեջ բանեցնելու համար:

### Մեջքը և գոտկատեղը

Ձիու մեջքը և գոտկատեղը պիտի լինեն ուղիղ, լայն, կարճ և լիբը (վորության վողնաշարը՝ մեջքի սուակը գուրս չցցվի): Զամբիկի համար մեծ պակասություն պիտի համարել, յեթե նրա մեջքը ճնճված է և գոտկատեղը ցածրադիր է (նկ. 24): Այդպիսի ձին թույլ է աշխատում: Մի քանի անգամ ծնելուց հետո մեջքն ե՛լ ավելի յէ ինչում և հետզհետեւ դժվար է ծնում: Վերջ է վերջն զամբիկը կարող է ստակել կամ լավագույն դեպքում տառիկած մարուկ ծնել: Անպեսար են նաև այն զամբիկները, վորոնց մեջքը կորացած, դուրս է ցցված: (ուզուի մեջքի նման), ինչպես ցույց է տրված 26-րդ նկարում:

Վորոշ չը լանիների դյուլացիներ առավելություն են համարում, յերբ ձիու մեջքը կորացած է, կարծելով, վոր այդպիսի ձին ուժեղ է: Բայց, թէ հարկե, այդ կարծիքը սիսալ է: Մեջքը կորանում է հիվանդության պատճառով և կոր մեջք ունեցող ձին չի կարող այնպիսի արագ և ուժեղ շարժումներ անել, ինչպես կարող է ուղիղ մեջք ունեցողը:


### Գավակը

Լով գավակը (թյարք) ձիու (մանավանդ գամբիկի) համար մեծ նշանակություն ունի: Վորքան լայն լինի գավակը, այնքան ել լայն լիլինեն հետույթի վոսկորները և ձին հետ կծնի: Այստեղից հետևում է, վոր սկսու

բնարել լայն և ուղիղ գավակ ունեցող ձիեր, (նկ. 27 և 29) : Վնաս չկա, յեթե դավակը շատ ել ուղիղ չլինի (ինչպես ցույց ե արված 27-րդ նկարում), այլ վորոշ չափով թիկված դեպի հետ (ինչպես արդ յերեսում և 28-րդ նկարից) : Այդպիսի գավակը, յեթե միայն բավականաչափ լայն և ծնելու համար, ողառակար և նաև այն տեսակետից, վոր յերկար է, իսկ յերկար գավակ ունեցող ձիերը սովորաբար թե՛ ուժեղ և թե՛ արագ են աշխատում : 24-րդ և 30-րդ նկարների վրա ցույց արված գավակները ցանկալի չեն, վորովհետեւ 24-րդ նկարի վրա ցույց արված գավակը շատ կարճ և և ուժեղ կերպով կախ և ընկնում դեպի հետ . այդպիսի գավակ ունեցող ձին դժվար և ծնում և ընդունակ չեն արագ քայլելու : Յօ-րդ նկարի վրա ցույց արված գավակը նրանով և վատ, վոր շատ նեղ և ցեղական նպատակների ծառայող ձիու համար, արդ պատճառով ել անպեսք է :


### Փորը և անուկները

Ձիու փորը լինում և նորմալ (նկ. 26). կախ ընկած (նկ. 31) և նիհարութեանը և խուսափել նիհար փոր ունեցող ձիուց, վորովհետև արդպիսի ձիերը համարյա միշտ ել հիվանդ են լինում, կերը վտա են մարսում և նիհարութեան կախ ընկած փոր են ունենում այն ձիերը, վորոնք միայն խոտով ու գարմանով են կերակրվում: Ալգպիսի ձիուն լիթե վարսակ տան և պակաս սեցնեն մեծածավակ կերի (խոտի և գարմանի) քանակը, այն դեպքում փորը նորմալ տեսք կստանա կնշանակի՝ միծ կամ կախ ընկած փորը ձիու նկ. 30. Սրուլիկ և կախ ընկած գավակ.




Նկ. 31. Կախ ընկած փոր.

Համար արատ չի կարելի համարել: Աճուկ կոչվում և այն տարածությունը, վոր ընկնում և ձիու վերջին կողի և ազդը դուրս ցցված վոսկը միջև: Վորքան փոքր և այդ տարածությունը, այնքան աշխատումակ և համարվում ձին: Իսկ յեթե նույն տարածությունը ձեռքի տփի չտփ կամ ել ավելի լայ-




Նկ. 32. Վախու վար: Գեղվ և աստղերով ցույց է տրված այն ակնուք, վար լինում է ձիու սրտախոսութան վարույթուն ժամանակ.




Նկ. 33. Վախոների կանոնավոր դրվագք. զամբիկն իր մարմանակազմով նման է հովառակի.


Նություն ունի, ասկ այդ նշան և, վոր ձին աշխատանքի համար զիմացկուն չէ : Փորբ և աճուր կը անաղելիս չպետք ե մոռանալ, վոր ձին կարող ե ռարտախտա ունենալ : Դժվար չե իմանալ՝ ձին սրտախտ ունի՞, թե չե այդ իմանալու համար պետք ե միայն ուշադրությամբ նայել, թե ի՞նչպես ե չնշում ձին : Յեթէ



Նկ. 34. Վասների ամկանն գրվածք. վասները շափազաց խորի են ընկած բրամի տակ.



Նկ. 35. Վասների ամկանն գրվածք. վասները շափազաց են ձգված դեպի դերք.




շնչառությունը համաչափ է և կողքերը աճուկների մաս մեզմ են բարձրացնում և իջնում, ապա այդ նշան ե, վոր ձին հիմանող չե: Խոկ յեթե կողերը բարձրանում են մեզմ, բայց իջնում են վոչ համաչափ, այլ կարծես՝ բարկեցով, մանավանդ իջնելու վերջին մոժենատին, յերբ թվում ե, թէ ձին շամազորեն գեպի իրեն և քաշում կողքերը, ապա այդ նշան ե, վոր ձին որոտախունի: Արտախտը հատկապես նկատելի յէ դատնում այն ժամանակ, յերբ

ձին արագ քշում են 400-600 մետր տարածություն, այս դեպքում կողքերի սուր զարկերն առվելի նկատելի լին լինում, ահա թե ինչու, յերբ ձին փորձվում և լծած վիճակում, անհամարելու և կանգնեցնել և տևանել՝ արգութ սրտախտ չունի ձին:

### Զիու վուսները

Բանելուց ձիու վուսներն ամենից ամելի լին վնասվում, այդ պատճառով լավ պետք և հիշել այն բոլոր արտաները, վոր կարող են լինել ձիու վուսներում, մանավանդ վոր այդ արտաներից մի քանիսը շատ քիչ են նկատելի:



Նկ. 36. Առաջի և հետևի վուսների կամանավոր դրվագներ.

Ամենից առաջ քննենք ձիու վուսների դրվագքը: Կանոնավոր պիտի համարել այն դրվագքը, իբր ձիու չորս վուսն ել միտնգամայն ուղղաձիգ են (յեթե նաև մնաց ձիու կողքից), ինչպես ցույց ե տրված 33-րդ նկարում:


Յեթե հետեւ և առաջի վուսները դրված են խորը իրանի տակ (Նկ. 34) կամ, հակառակը, իրանից առաջ ու յետ են դրված, ինչպես ցույց ե տրված 35-րդ նկարի վրա, ապա թե մեկ և թե մուս դրվածքը լավ չե: Առաջին դրվագում առաջի վուսների վրա տվելի ծանրություն կընկնի, քան հետեւ վուսների վրա և վորոշ ժամանակ բանելուց հետո այդպիսի ձիու և վուսները կջարդվեն, իսկ յերկրորդ դրվագում, ալսինքն յերբ վուսների դրվածքը շատ և ձգված, ձիու քայլը կարճ (փոքր) և թուլլ կընի:

Ձիու դագավակի կողմից նայելիս պետք և հետեւ վուսները համարյա ծածկեն առաջի վուսները, իսկ գլխի կողմից նայելիս հետեւ վուսները համարյա չափակ յերեան առնեկ վուսների հետեւում: Վուսների կանոնավոր և անկանոն դրվածքները ցույց են տրված 36-րդ, 37-րդ, 38-րդ, 39-րդ և 40-րդ նկարների վրա: Վուսների անկանոն դրվածքից միշտ պայտահարություն և




Նկ. 37. Մերկներ և կաներ ունեցող առաջի վատների կամանավոր դրվագներ.


Հազոր թյուն և առաջանում: Մայրահեղ դեպքում ձին պիտի ունենա այնպիսի վատներ, ինչպես ցույց և տրված 39-րդ նկարի վրա («Ե» տառը), վորովհետո արգալիսի ձիերը մեծ ժամանք շատ կայտառ են լինում, թեև արագ վաղքի ժամանակ նրանց առջևի վոտները դրսից կպայտահարվեն: Յեթե ձին



Նկ. 38. Ա—կամասվար վառք. Բ—այծածունկ. Վ—բազմված ծունկ.



Նկ. 39. Ա—հետևի վառների կամասվար դրվագքը. Բ, Վ, Շ և Դ—հետևի վառների արտավար (անկաման) դրվագքը.



Նկ. 40. Առաջի վառների անկամ դրվագք.

ունենա այնպիսի վոտներ, ինչպես ցույց և արգած 40-րդ նկարի վրա («Ա» տառը), և զրահամբ ունենա նաև լոյն կուրժք, ապա այդպիսի ձին կարելի յէ գնել զանդաղ քայլերով բանեցնելու համար: Այդպիսի ձինը ուսմորաբար ուժեղ էն լինում:

Դնելիս այնպիսի ձի պիտի ընտրել, վոր ուսը չեզազիր լինի: Աւոյիդ ուս ունեցող ձին առելի պակաս արագավազ և և ծանր բեռ չի կարող քաշել: Աւոյիդ արատից ձին կկաղի: Այս կազությունը նկատելի յէ լինում յերբ ձին չոփ են չցում, մանավանդ յերբ ձին ճանապարհի չեզազառույներում դառնում և այն կողմը, վոր կողմէց նա կաղում ե: Աւոյիդ կազությունը շատ զժվար և բրժշկվում, արդ պատճառով պետք և խուսափել այդպիսի ձի զնելուց: Աւոյիդ մինչեւ ծունկը սովորաբար արատներ չեն լինում, բայց ծունկը պիտի անտղիլ մեծ ուշագրությամբ: Շունկը՝ առջեց նայելիս՝ պետք և քառանկյունու ձեռով միանդամայն պարզ գծագրված լինի. նա պետք և մսուս չլինի, Հոգերի ջրից պարկեր չպիտի ունենա, իսկ նրա վոսկորները մաշկի տակ նկատելի պիտի լինին: Կողքից ծնկին նայելիս՝ ծունկը և վոտի ամ մասը, վոր ընկնում և ծնկան և կապատեղի հողի միջև, պետք ուղղի լինեն, ինչպես ցույց էն արգած 38-րդ նկարում («Ա» տառը) և վոչ թե զեղի ներս կամ գեղի զուրս ճկված լինեն: Առանձնապես շատ վաս ե, յերբ ծունկը գեղի ներս և ճկված: Այդ ժիշը սովորել վոտներից չափազանց թույլ են լինում և անտեսությանը շոշափելի ուղուս չեն կարող տալ: Ենք ծունկը և դաստիակը (ՊՈՅԾԵ) գուրս նկված են լինում, ապա ասում են, վոր ձին «այծածունկ» ունի (տես 38-րդ նկարի «Ե» և «Յ» տառերը): Զիու «այծածունկը» կարող և բնածին լինել կամ տառնալ, յերբ ձին ծանր աշխատանք և կատարում մատղաշ հասակում: Բնածին «այծածունկը» ձիու աշխատանքի տեսակետից վոչ մի նշանակություն չունի, ուրեմն և կարելի յէ այդպիսի ձիեր համարձակ զնել, բայց յեթե ձիու այծածունկն առաջացել և ծանր աշխատանքից, այդպիսի ձիերից պետք և խուսափել: Բնածին «այծածունկը» ստացովի այծածունկից», տարբեկը լը շատ շեշտ է: Դրա համար պետք և բարձրացնել ձիու այն վոտը, վորի վրա «այծածունկը» ավելի քիչ և նկատվում և ապա նայել մյուս վոտին: Ենթէ մյուս վոտը մնա նախկին վիճակում, այսինքն կոր, ապա նշանակում ե, վոր «այծածունկ» ըլ բնածին ե, իսկ յեթե վոտքն ուղղվի և այծածունկն այլևս չերեւա, ապա նշանակում ե, վոր բնածին չե, այլ առաջացել և աշխատանքի ժամանակի:

Դաստիակը ծնկի տակ այնքան սաստիկ սեղմված չպետք և լինի, ինչպես ցույց և արգած 43-րդ նկարի վրա: Այդ վոտքի թուլության նշանն ե: Դաստակի վրա վոսկը պինդ ուսուցքներ չպետք և լինեն: Մանավանդ պիտի խուսափել այնպիսի ձիուց, վորի վոսկը թուլուցքները գոնզված են թէ՝ ծնկի տակ, թե ծնկան յետեր և կամ ձգտանի (ջների) մոտենը: Ենթէ (վոսկը ուսուցքը) դանվում և դաստիակի մեջտեղը, վոտի ներսի կողմում, առանձին նշանակություն չունի, բայց ելի ցանկալի չե, վորովհետեւ այդ նշանակում ե, վոր ձին զնալու ժամանակ իրեն պայմանաբարում է:

Կապատեղի հոգը և կոճը նույնպես վոսկը ուսուցքներ և չըլից պարկնը այսինքն վափուկ, ուսուցքներ չպիտի ունենան: Թէ՛ վոսկը ուսուցքները և թէ՛ չըլից պարկերը համարյա հաստատուն նշան են, վոր ձիու վոտները թույլ են: Կոճը պետք և այնպես դրված լինի, ինչպես ցույց և արգած 37-րդ նկարի վրա:

41-րդ և 42-րդ նկարների վրա ցույց են տրված արատավոր կոճեր.—առաջինը գեղքում կոճը խիստ դիբ է, իսկ յերկրորդ՝ գեղքում թույլ է: Այդպիսի արատ ունեցող ձիներն աշխատանքի համար ոզտակար չեն կարող լինել, այդ պատճառով նրանցից պետք է խուսափել: Վուկրուսուցներ ունեցող ձին լարված աշխատանքից կկաղի և ժամանակի ընթացքում կաղությունը կը պահած մշտական: Վուկրի ուսուցքներ ունեցող ձի չպետք է դնել:



Նկ. 41. Ռւդամիդ կաներ.



Նկ. 42. Թույլ կաներ



Նկ. 43. Անդված դաստակ-

### Սմբակը

Զիու սմբակի արատների քննությանն անցնելուց առաջ, պարզության մահար, անհրաժեշտ է իմանալ, թե ի՞նչ զեր են խաղում սմբակի առաջին ժամերը և այն ժամանակ հատկանալի կլինի, թե ի՞նչպիսի արատներից պետք է ամենից ավելի խուսափել: Սմբակը կաղմված ե՝ ա) յեղջերապատից, բ) սմբակի ներբանից, գ) ոլաքից և դ) պասկից: Յեղջերապատը նուրբ ժամերը, այսինքն՝ վոսկորները և միար պաշտպանում ե ճանապարհի խորսորդություններից: Սմբակի ներբանը, ինչպես և յեղջերապատը, վոտքը պաշտպանում է ներքեւից: Սլաքն ավելի բարդ աշխատանք է կատարում: Սլաքը սեղմում է լայնացնում և սմբակը, յերբ վերջինս բարձրանում և իջնում է գետին: Յեթէ սմբակը գետին իջնելիս սլաքը չլայնացնի, ապա արագ գնալու ժամանակ ամբողջ վոտն այնպիսի հարվածներ կստանար, վոր շատ կարճ ժամանակում ձին աշխատանքի անընդունակ կդառնար: Այսպիսով, ուրեմն, սլաքը սմբակի համար զսպանակի դեր է կատարում, միննույն ժամանակ ամբողջ սմբակը ձիու վոտի համար նույնպիսի աշխատանք է կատարում, ինչպիսի աշխատանք է կատարում են ուսուրները կառքի համար: Յերբ վոտքը դրվում է գետնին՝ սմբակը ապասեղմվում և զգալի չափով մեղմացնում է այն հարվածը, վոր ստանում և ինքը ու այդպիսով վոտների մյուս ժամերն ազատում է փշանակուց: Պսակը սմբակի ամենանուրբ մասն է, վորովհետև պաշտպանված և միայն մազերով, մինչդեռ ճանապարհին հաճախ նա զարնվում է խորսորդություններին: Պսակն ոզմում է յեղջերապատի աճելուն և յեթե փչանա, սմբակը կսկսի անկանոն աճել:

Կանոնավոր սմբակը, ինչպես ցույց և տրված 33-րդ և 37-րդ նկարների վրա, — զրսից պետք հարթ լինի, ճաքճքած չփռուք և լինի և պատկեցուք ողբակներ (վոսկրուուցներ) չպետք և ունենան: Ազակներով ու ճաքճքաված սմբակի մասը վոլորդած և գետի վեր և կոչվում և «վողնաձեռ», սովորաբար ունենում են այն ձիերը, վորոնց սմբակը անցյալում խիստ բորբոքվել է և կամ պատկը սատուիկ պայտահարվել է: Բացի դրանից, պատուաւում են նաև տափակ և նույնիսկ «օպորտաձեռ» սմբակներ ունեցող ձիեր: Այսպիսի գեղքերում ներբանը ներ ընկած չի ինում, ինչպես սովորաբար նկատվում է, այլ սմբակի պատերի հետ միասին մինչույն մակարդակի վրա և գտնվում կամ վորոշ չափով պատերից զուրս և ցցվում, այսինքն չպայտած ձին գետնին կանգնում և վոչ թե սմբակի պատերով, այլ ներբանով: Հինում են նաև սովորած սմբակներ: այս պատուաւում և այն գեղքում, յերբ սմբակը պայտահելուց առաջ սիամ ձևով են մաքրում: Այսպիսի զեղպերում սլաքը զագարում և այլն իր գործը կատարել, այսինքն զապանակի նշանակություն ունենալ, և սմբակը հետպհետեւ նվազանակով՝ ձիու կտրության պատճառ և դառնում:

Այս արատներից բացի, յերբեմն պատուաւում և նաև, վոր սմբակը չեղ և լինում: այս դեպքում կողդիք պատերից մեկը և կրունկը ապելիք պինդ են կողչում դետնին: Այս զբությունն ել կազության պատճառ և զառնում: Աւրեմն, ովնաց և խուսափել այն ձիերից, վորոնց սմբակը կամ տափակ և, կամ «օպորտաձեռ», կամ «վողնաձեռ», կամ չեղ և անպայման պետք ենայիլ, թե առողջը և արդյոք սլաքը և չի՞ փոսում նա: Յեթե ալաքից գարշահուս և զալիս, կամ սլաքը փիրուն և զառել այլ նշանակում և, վոր նա փառում է:

Զիու աստվի վոսների արատները քննելուց հետո, չպիսի մոտանազ, վոր վոսկը բուռեցներ և սմբակի արատներ ունենում են նաև հետեւի վոսները: Զիու հետեւի վլոտի ամենից զիմավոր աշխատանքը կատարում և վաղքահողի քննությունը (ռակատելյան ստաց), այդ պատճառով ել վաղքահողի վոսները կատարել առանձին և զառչությամբ, վորովհետեւ հետեւի վոսների բոլոր արատները (բացի վոսկրային ուռեցքներից ու սմբակի արատներից) լինում են հենց այդ մասում:

Նորմալ վաղքահողը պետք և բավականաչափ լայն և մեծ լինի. բայց անհրաժեշտ և, վոր նա մասու լինի, այսինքն վո՞չ առաջից և վո՞չ ել կողքերից ուռեցքներ չպիստի ունենան: (Ձրլից պարկը, վորն անցնում և վաղքահողի միջից՝ նրա յետեւի մասի մոտ՝ կոչվում է «միջանցուկ»): Կաշին պետք և սերկերապով նստած լինի վաղքահողի վրա, ցույց տալով նրա բոլոր վոսկրները. բացի ջրլից պարկից և միջանցուկներից վաղքահողի վրա կարող են 3 առաջակարատներ ել լինել՝ սպառան, ջլաբորը (կամ այսպիսի կոչված «հապատակչի վառ») և պիպհակը: Շատ հեշտ ե իմանալ՝ ձին ջլաբորը ունի, թե չե՞ յերբ սպառան ունեցող ձին տեղից շարժմում և, ապա հետեւի այն վառը, վորի վրա սպառան կա, ապելիք յե վեր բարձրացնում, քան մյուսը: Բացի դրանից, վոտը հետեւից դիտելիս սպառանը, վոր հողատակի ուռեցք և հանդիսանում, համարյա միշտ ել պարզ յերեսում է, ինչպես ցույց և տրված 44-րդ նկարի վրա (սպառանը նշանակված է «Ա» տառով): Կուրքա կամ նապատակի վրա (տես նկ. 44, «Բ» տառը) առաջ և զալիս ձգտանի (սահակալու) բորբոքումից և նրա հաստանալուց: Այդ պակասությունը շատ պարզ յերեսում

վառքը կողքից դիսուլիս : Թե՛ սպառանը և թե կուրբան ձիու համար լուրջ առանձներ են, իսկ պիպակակը (տես նկ. 44, «Ե» տառը), ձիու աշխատունակության վուժը տեսակետից վուժ է նշանակություն չունի : Այդ արատը առաջանում է, յերբ ձիու վարգահողն ուժեղ կազում է սայլի առջևի մասին կամ սահնակի դիմին, յերբ ձին կարճ են լծում :

Ազապիսով՝ մենք ծանու-

թացանք այն բոլոր պակասություններին, վոր կարող և ունենալ ձին և վորոնց լինելու գեղաքում ձին շատ քիչ պետքական կիրակի աշխատանքի հա-

մար: Անհրաժեշտ և հիշել նկ. 44. Վազահողի արատները. Ա—վազկային նաև այն, վոր հովատակի սպառան, Բ—կուրբա, Յ—պիպակ.


մարմանակազմ ունեցող (ինչպես ցույց է տրված 33-րդ նկարում) զամբիկ չպետք և գնել, վորովհետեւ այդպիսի զամբիկը լավ չի ծնի:

### III ԳԼՈՒԽ.

#### ԶԻՆ ԶՆՆԵԼԸ ՅԵՎ ՓՈՐՁԵԼԸ ԳՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ Զննության կարգը

Տուկայում և վաճառքի այլ վայրերում միշտ ել աղմուկ, հրահրոց ու նեղութք և լինում. բացի դրանից, ձիավաճառը շանկանալով ժամանելի իր արտասալոր ձին, միշտ ել քաշում և նեղվածք տեղեր, վորովեսպի հնարավոր չլինի զննությունը լավ կատարել, և ձիու արատները աննկատելի մնան: Այդ պատճառով ավելի լավ և մի համապատասխան ձի նկատի ունենալ, զուրս բերել աղմուկից, հրահրոցից և ապա ոկտել զննությունը: Այսուհետեւ հիշենք, թե ինչքան շատ արատներ կարող և ունենալ ձին: Այդ արատներից մեկն ու մեկը չմոռանալու համար անհրաժեշտ է, իբրև կանոն, իմանալ, վոր պետք և ձիու զննությունը կատարել առանց շուապելու, մաս առ մաս և վուշ թե մեկ բերանը զննել և մեկ ել հետեւի վտանքը:

Ամենից լավ և զննությունը կատարել հետեւյալ կարգով.—ձիու կողքի ուղղությամբ հեռանալ մի հինգ քայլ և նայել, թե կանոնավոր և արդյուք ձիու պարանոցի (վզի) դրվածքը, մեջքը, մնակավը, գոտկատեղը և զավակը լա՞վն են արդյուք, թե չե, վտանքը դրվածքը կանոնավոր է, թե չե: Ցեթե այս տեսակետից պակասություն չկա, այն գեղքում պետք և զննությունը կատարել ձիու հետեւի կողմից, դարձյալ հինգ քայլ հեռավորությունից. այս անկամ պետք է պարզել, թե կանոնավոր են դրված վուսները, հետեւի վտանքը ծածկում են առաջի վտանքը և արդյուք բավականաչափ լայն և զավակը: Բացի դրանից, անհրաժեշտ և նայել, թե արդյուք չարզված չե ազգուկը: Այսուհետեւ նույն տարածությունից ձիուն պիսի նայել մյուս կողքից՝ պարզելու համար, թե վերք կամ այլ պակասություն չկա՞ արդյուք ձիու վրա, դրա հետ միաժամանակ պետք և ուշադրություն դարձնել, թե ձին ձեզ հետեւելիս ինչպես ե շարժում ականջներն ու աչքերը: Սրանից հետո պետք է կանգնել զլինի կողմից և նայել ձիու առաջի վուսների դրվածքին, կրծքի և ճակատի լայնությանը:



Այս բոլորը վերջացնելուց հետո պետք է մոտենալ ձիռն և նայել աշ-  
քերին, թե արդյո՞ք սպիտակ փառ չկա աչքերում: Պետք և իմանալ, վոր  
յերբեմն աչքերը միանդամայն պար են լինում, բայց և այնպես ձին վոչքին չի  
տեսնում: Զախարվելու համար պետք է ձիռ աչքից մոտ 35 սանտիմետր  
տարածության վրա ձեռքը շարժել, և յեթե ձին աչքերը թարթի, ապա այդ  
նշան և, վոր նա լավ տեսնում է: Այսուհետեւ պետք են զննել քթածակերը և  
յեթե այսուղ ել պահպանթյուն չլինի, անցնել թերանի զննության: թերանը  
զննելիս չպետք է մեկ ձեռքով բռնել սահմակոթից կամ ձեռքը զնել ձիռ խոր-  
դյունին, իսկ մյուս ձեռքը կոխել ձիռ թերանը, բռնել լեզուն և հանել մի կող-  
մի վրա: Զննության այս ձեռք գուր չի գալիք ձիռն, նա զգուում և տպառ-  
վել ձեռքից և այլպիսով զգվարանում և նրա տարիքը գորոշելու գործը: Ա-  
վելի հետ և ամի ձեռքով բռնել սահմակը, իսկ աջ ձեռքով ձիռ թերանում զնել  
մարակի կոթը կամ փայտի մի ձողիկ, ինչպես առհասարակ սահման (լիամ) ևն  
թերանում զնում, և փայտյա այդ ձողիկով լեզուն պահել թերանում մինչեղ  
տարիքն իմանալը: Այսպես գարվելու գեղքում ձիքը իրենց շատ հանդիսա-  
նեն պահում և չեն աշխատում գուրս թուչել ձեռքից: Տարիքը գորոշելուց հետո  
պետք է անցնել վոտների զննության, հավաստիանալու համար, թե ձին չու-  
նի՞ արդյոք վոսկրային ուռեցներ, յերակային ընդյանումներ և այլ կարգի  
պահանջումներ, գորոնց մասին մենք խօսեցինք վերեւում: Այս զննու-  
թյան միջոցին պետք է ամեն մի վուր բարձրացնել և տեսնել՝ արդյոք ձիռ  
սմբակը հարթ չե՞ն, չի՞ փառում արդյոք սմբակի ոլաքը և ուրիշ պահանջուն-  
ներ չունի՞ ձին:

### Փորձելու կարգը

Վոտների զննությունից հետո պետք է իմանալ՝ չի՞ կաղում արդյոք ձին  
մի կամ միանգամից մի քամի վոտով: Այդ իմանալու համար, պետք ձին  
քաշել նախ քայլով և ապա՝ վաղքով: Քայլով քաշելու ժամանակ պիտի նայել՝  
հետուի վոտի հետքը բնկնո՞ւմ և արդյոք առաջին վոտի հնորքի վրա, թե՝  
նրանից հետ և մնում, յեթե հետ և մնում, ուրեմն ձին վորք քայլեր տնի:  
Պորձի ժամանակ միշտ ել պիտի պահանջնել, վոր ձին վաղքով քաշեն պինդ  
հողի վրա, վորով հետեւ փափուկ զետնի վրա նա յերեն չի կաղում,  
իսկ չոր և պինդ հողի վրա՝ սկսում և կաղել: Պինդ հողի վրա ձին կաղում և,  
յերեւ նրա սմբակը և մանավանդ ներբանը (վոտի տակը) հիվանդ է: Եեր-  
բեմն այն տպալորությունն և ստացվում, վոր իրեւ թե ձին չի կաղում, այլ  
դժվարությամբ: Ա առջևի վոտները խօսում հողի մեջ կամ այդ վոտներով  
դոփում և հողը: Այլպիսի ձին անպետք և և պիտի յենթազրել, վոր այդ ձին  
կամ քրտնած ժամանակ ջուր և խմել ու մրսել, և կամ ծանր աշխատանքից  
վոտները վնասվել են:

Ձիռ կաղությունը ծածկելու համար յերբեմն ձիավաճառներն այնպես  
են հարվածում ձիռն, վոր նա կամ քայլով ու վաղքով չի զնում բոլորովմին, այլ  
տեղում պտափում և և կամ սկսում և զալոպել: Այդ պատճառով նախքան  
փորձելը պետք է ձիռ համար միանգամայն հանգիստ վիճակ ստեղծել և  
ապա միայն տիրոջը պարտազրել, վոր ձիռն մտրակով չհարգածի, քաշի  
հանգիստ վաղքով և քայլով: Այս փորձից հետո, յեթե պարզվում է, վոր  
ձին պակասություն չունի, ապա պետք է փորձել, թե վո՞ր չափով են նա պետ-  
քական զծելու համար: Այսուղ ել ձիավաճառները խորածանկություն են  
քանի շնորհում: ձին լծում են թե չե, իսկույն սկսում են քչել սմբողջ վաղքով

և Հնարագործություն չեն տալիս կանոնավոր նայել, թե ինչպես և դնում ձին : Այդ պատճառով ձին լծած ժամանակ փորձն ուրիշ կերպ պիտի կատարել : Յեցք ձին յժված և սայլին, պետք և մի հինգ մարդ կանչել և խնդրել, վոր Հենքին սայլին և այնպես անեն, զոր սայլը տեղում մնա : այսուհետեւ կամոցուկ պետք և շարժել ձին և հետեւ, թե ինչպես ե ձգում՝ արդյո՞ք Հետ չի քաշում, յերբ բնոր ծանր և թվում իրեն : Ենթե ձին լավ և քաշում բնոր, այդ ժամանակ պետք և հինգ-վեց հոգի նստեցնել սայլում և քայլով քել, այնուի լավ և վատ ճանապարհով, որինակ՝ ամփազոս կամ ցեխոտ ճանապարհով կամ խոր ձյունով, իսկ հետո լավ ճանապարհ դուրս դալ և քշել վաղբով : Այս փորձերը կատարելուց հետո միայն կարելի յե ասել, զոր ձին դնաված և ինչպես պետք և կարելի յե զնել, յեթե դուր և յեկել :

#### IV ԳԼՈՒԽ

##### ՁԻՒԻ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Հոմարյա բոլոր գյուղական տնտեսություններն ել ձի ունեն : Ձին գյուղացու առաջին ողնականը և ապրուստի միջոցն ե, բայց թե ինչպես պետք և պահել և խնամել ձխուն, այդ ժամանի միջնէ որս գյուղացին շատ քիչ բան դիմուել : Ենթե զյուղի ձին, զոր Համարյա թե միշտ ել նիշար և, մարմինը կեղատուա և կողերը զուրս ցցված, Համեմատենք քաղաքի վորեւ ձիու հետ, ապա գյուղի ձին մեկ միշտ ել վատ կիված : Քաղաքի ձին թե՛ մաքուր և, թե՛ գեր և թե՛ մազը միալար և նստած մարմինն : Ինչի՞ց և առաջանում այս տարրերությունը գուցե զյուղի ձին ինքնին այնքան վաս և, զոր ինչքան ևլ խնամք թափվի, միհնույն և, անոզուա կանցնի, —ամենելին վոչ : Միջին Հաշվով մեր զյուղի ձին հետ չի մնում նույնիսկ արտասահմանյան վորու ցեղի ձիւրց, բայց ամրող գաղտնիքը նրանում և, զոր մեր զյուղի ձիու խնամքը չափազանց վաս և :

Ի ոչ հիմնական սխալներ կան ձիու կերակրման գործում

Ամենից առաջ տեսաններ, թե ինչպես և կերակրվում ձին և ինչպես պետք է կերակրվեր նու : Զմեռը մեծ ժամանմք ձխուն վարսակ չեն տալիս, իսկ յեթե տալիս են, ապա փայտի կամ այլ աշխատանքի զնալուց միայն մեկ որ առաջ : Մեր զյուղացին սովորաբար այնպես և կարծում, զոր յեթե ձին աշխատանքից առաջ կերակրվի, ապա միանդամից ուժ կատանա : Այս կարծիքը, իհարկե, սխալ է : Ուժը հավաքվում և շարաթներով և վոչ ժամերով : Զմեռը ձին խոս ել շատ քիչ և տեսնում, մեծ ժամանմք նա դարման և ուսում : Գարունը բացվում և, վրա յե հասնում ցանքի ժամանակը և վարն սկսելուց միայն մի քանի որ առաջ սկսում են ձիուն կերակրել վարսակով և խոտով, այն ել քիչ-քիչ, իսկ յերբ զալու են գուրս գալիս և ցանկանում են վարելու ժառ ժամանակ խորի խորը մտանել հողի մեջ, պարզվում և, զոր ձին ուժ չունիր : Այն ժամանակ զյուղացին սկսում և վոչ թե վարել, այլ քչփորել (ճանգուտել) հողը, այլևս մտածելով, թե ինչպիսի բերք կստացվի այլպիսի վարեց :

Ամրող գարնանը և ամռանը ձիուց շատ մեծ աշխատանք են պահանջում, բայց հենց այդ ժամանակամիջոցում ել աշխատում են ձիուն կերակրել միշայն արածեցնելով :

Ենթե զյուղացին ցանկանում և չաղ և աշխատանքի համար միշտ պետքական ձի ունենալ, ապա նա պետք և տարվա համար պատրաստի 16 ցենտ-

Ներ վարսակ, 15 ցենտներ խոտ, 7 և կես ցենտներ գարնանացանիք դարձան, և աշորայի ալյուր՝ մեկ և կես ցենտներ: Այս պաշարն այնքան ել մեծ չէ և յեթե հարավորություն կա, պետք վարսակ և խոտ ավելիք պատրաստել: Խոնչպես պիտի զործագրել կերպ այս պաշարը: Ջիւն որական պիտի տալ չորս կիլոգրամ վարսակ<sup>3)</sup>, չորս կիլոգրամ խոտ, յերկու կիլոգրամ գարման— հատը խառնելով 400 գրամ ալյուր: Ջիւն այսպես պետք և կերակրել ամբողջ տարին և վոչ թե այն որերին միայն, յերբ նա աշխատում է: Խոկ այս որերին, յերբ ձին ստիպված է ծանր աշխատանք կատարել, որինակ՝ կասել, վատ հանապարհով ծանր բռն քաշել, ապա կերպ սովորական նորմայից գարս պետք և տալ ելլ 1.2 կլզ. (մեկ կիլոգրամ և 200 գրամ կամ 1200 գրամ) վարուակ: Հասկանալիք յե, վոր մարմնով մեծ ձիերն ավելիք կեր կողահանջնեն:

Եթե անտեսությունը կերի մեծ պաշար չունի և վերեւում հիշած նորմայի փոխարեն ունի 8 կամ 10 ցենտներ վարսակ, նույնքան խոտ և մի ցենտներ և ալյուր, ապա այդ կերերի ամենորյա չափը պիտի պակացնել և նրանց փոխարեն ավելացնել քուսպ, յեփած կարտոֆիլ, գաղար, ալյուրի թեփ կամ գարման:

Այսպիսի գեղքերում ամեն որ ձիւն պիտի տալ՝ 1 և կես կլզ. վարսակ, 1 և կես կլզ. խոտ, 1 և կես կլզ. գարման՝ հատը խառնելով 200 գրամ ալյուր, 2 կլզ. քուսպ, 2 կլզ. հարզ, կես կլզ. գաղար և 3 կլզ. յեփած կարտոֆիլ կամ թեփ: Բայցի դրանից, պետք և ավելացնել 3—4 կիլոգրամ վարմանքանքի ծղոտ:

Բայց չպետք և մուանալ, վոր այդ կերերը ձիու համար բավարար չի կարելի համարել և յերբ ձին ծանր աշխատանք և կատարում, պետք և նրան կերակրել այնպես, ինչպես ասացինք իր տեղում, խոկ այդ պական նորմայով ձին կարելի յե պահել այն ժամանակ միայն, յերբ անտեսության մեջ աշխատանքը թեթե:

### Ջիւն կերակրելու ժամանակը

Ջիւն կերակրելու համար վրորչ հմտություն և հարկավոր: Որվա ամբողջ կերը, յեթե միանգամբ ածենք մուռքի մեջ և զննեց ձիու տուած, գրանից շատ քիչ ողուու կատացիք: Ձի յել կարելի այնպես անել, ինչպես անում են դյուզացիներից չատերը, վարոնք ձմեռն որական յերկու անգամ են կերակրում ձիւն, խոկ ամառը՝ յերեք: Այս ձեռվ կերակրելու գեղքում ձին կուտի վոչ թե ամբողջ կերը, այլ՝ միայն նրա մի մասը, իսկ մնացածը ձիու նըզով կտարանա, կթքուովի և համը կկորցնի:

Ջիւն պետք և կերակրել վոչ պակաս, քան 4 անգամ ձմեռը և 5 անգամ՝ ամառը: Ձմեռը ձին պետք ե ջրել առավուտյան ժամի 7—ին և տալ 1 կլզ. 200 գրամ խոտ, խոկ յերբ խոտն ուտի, վերջացնի, պետք և տալ 1 կլզ. 600 գրամ վարսակ: Ենթե կված ժամի 12—ին պետք ե թեթեվ ջրել և տալ մոտ 1 կլզ. գարման հատը խառնելով 200 գրամ ալյուր, խոկ յերբ ձին ուտիութերջացնի այլ, պետք և տալ 1 կլզ. 200 գրամ վարսակ: Ժամի 5—ին որվում և վերջին բաժինը, այսինքն՝ 1 կլզ. գարման և 1 կլզ. 200 գրամ վարսակ: այս դեսպանը վարսակը կարելի յե խառնել գարմանի հետ:

\* Մեկ մոտ վարսակին փոխարինում և գարին, վրորչներն զարին տիեզեր, քան վարսակը, ուստի զարի պիտի տալ 3 կիլոգրամ: Դարին առաւց առաջ պիտի թրշել մարուր թրի մեջ, ապա թրից հանել ցամաքեցնել ու այնպես տալ: Ամեն անգամ թրշել մարուր թրի մեջ:

Դարին կարելի յե տալ նաև ջարշած վիճակում:

Մասնը. խմբագրութիւն:

Ամսարք ձին պետք և կերակրել ուրիշ կերպ: Այն որը, յերբ ձիով պետք և վար անել կամ ուրիշ ծանր աշխատանք կատարել (որինակ՝ լծել), կերը բաշխվում և հետովյալ ձևով: — առավոտյան ժամի 4—ին կամ նույնիսկ 3 և կիսին ձին պիտի ջրել և 800 գրամ խոտ տալ, իսկ յերբ ձին ուստիվերջացնի արդ խոտը, տալ 2 կլդ. վարսակ: Ձին պետք և բանեցնել վոչ պիտի շատ, քան մեկ կամ մեկ ու կես ժամ կերակրելուց հետո: Ժամի 8 և կիսին պիտի թողնել, զոր ձին կես ժամ հանդատանա, և այդ ժամանակ 1 կլդ. 200 գրամ խոտ պիտի տալ նրան, իսկ աշխատանքն սկսելուց առաջ՝ մի քանի կում ջուր: Ցերեկում ժամի 12—ին լծից արձակելով՝ ձիուն պիտք և տալ 800 գրամ խոտ: Խոտն ուստեղուց հետո մի քանի կում ջուր պիտի տալ ձիուն և ապա՝ 2 կլդ. վարսակ: Ցաշի ժամանակ ձին պիտք և հանդատանա վոչ պեկաս, քան 1 և կես ժամ, իսկ չորս յնդանակին՝ 2 ժամ: Լծելուց առաջ ձին պիտի ջրել, բայց վոչ շատ: Ցերեկոյան ժամի 5—ին կամ 5 և կիսին պիտք և ձին նորից հանդպատճան: Այդ ժամանակ նրան պիտի տալ 1 կլդ. խոտ, իսկ աշխատանքն սկսելուց առաջ՝ նաև 5 կում ջուր:

Աշխատանքը վերջանալուց հետո, մոտավորապես յերեկոյան ժամի 8—ին, պիտք և թողնել, զոր ձին մի լավ հանդատանա: Ժինչե ժամի 10—ը ձին չափափ կերակրել, իսկ ժամի 10—ին պիտի տալ 2 կլդ. գարման, ցանելով վրան 400 գրամ ալյուր և զարմանին ավելացնելով 1 կլդ. 200 գրամ վարսակ: Այդ կերը տալուց առաջ պիտք և 5—6 կում ջուր խմեցնել ձիուն, իսկ կերակրելուց կես ժամ հետո պիտք և ձին լավ ջրել: Ավելի լավ և, յեթե ձին ջուրը խմի վոչ թե միանգամբից, այլ՝ կամաց-կամաց, զբա համար պիտք և ժամանակ առ ժամանակ ջրի գույլը ձիու առաջից վերցնել և կամ գույլի մեջ խոտ զցել, վորպեսզի ձին ջուրը ծծի խոտի միջով: Այն որը, յերբ ձին չի բանելու, կերը պիտք և տալ հետեւյալ կարգով: — առավոտյան ժամի 4—ին ձին ջրել և 2 կլդ. խոտ տալ, իսկ զրանից հետո՝ 2 կլդ. վարսակ: Առավոտյան ժամի 7—8—ի մոտերը կարելի յև ձին արոտ գուրս թերել և թողնել, զոր արածի մինչև ժամի 11—ը: Ցաշին (ժամի 12—ին) պիտք և ջրել ձին և տալ 2 կլդ. գարման՝ հետը 400 գրամ ալյուր խոռոնելով: Ցաշից հետո ժամի 4—ին կարելի յև ձին նորից արոտ գուրս թերել և թողնել այնահետ մինչեւ յերեկոյան ժամի 8—ը, զորից հետո զարձալ պիտի ջրել և 2 կլդ. խոտ տալ, իսկ զրանից հետո՝ 2 կլդ. վարսակ: Ժամի 10—ից միշտ առավոտյան ժամի 4—ը կարելի յև ձին թողնել գիշերային արոտում:

Ցեթե զյուղացին այս ձևով վարդի, այն ժամանակ կոնհենա գեր (չաղ) ձի, զորը միշտ ել կարող ծանր աշխատանքներ կատարել: Այստեղ նկատի յև առնված կերի լրիվ նորման: բայց յեթե անընթրիության կամ հոգասակավության պահանառու հնարավոր շինի այնքան կեր մթերել, վարքան պահանջում և մեկ տարբան համար, ապա յեղած պաշարի համեմատ քաշացնելով կերի բաժինները, բաշխման ժամանակ, այնուամենայնիվ պիտք և պահել այն կարգը, զորի մասին քիչ առաջ խոռոշինք: Ցեթե ծզոտ չկա, ապա, ինչպես արգեն տակ ենք, նրա փոխարեն կարելի յև գարման տալ խոտը կարելի յև փոխարինել բուսապով, դապարով, յիփած կարտոֆիլով և հացով: Բայց վարսակը վոչ մի բանով հնարավոր չէ փոխարինել, և յեթե դյուզացին ինքը չունի, ապա պիտք և ուրիշից գնի թեկուր 9—10 ցինտներ (16 ցինտների փոխարեն) և պահի իր ձիու համար:

## Արուսը

Անհրաժեշտ և մի քանի բան ել արոտի մասին խմանալ : Ճամփառանեկութեած և ճանանա տափարակներում : և ցլկուներում ձին արածեցնել չե կարելի : Այդպիսի տեղերի խոտը թթու յե իրեն ձին անունգ , բաց վնասից վոչ մի ոգուս տալ չի կարող : Այդպիսի խոտաց ձիու փորբ փրփում ե , և ծակոցներ են առաջանում : Արոտի համար բարձրագիր և բյուրներով տեղ պետք է ընարել : Զի կարելի անոթի ձիուն արոտ գուրբ թերել , յեթե արտուռմ գեռա ցող կա , վորովհետեւ ձին վնասիցում և ցողից : Գարնանը և աշնանը նույնապես , յերբ խոտերի վրա յեզած և լինում , ձին , մասնավանդ ծանրած զամբիկին չպետք և արածեցնել :

## V Գլուխն .

### ԻՆՉՈ՞Ի ՊԵՏՔ Ե ԹԻՄԱՐԵԼ ԶԻՌԻՆ

Ասված ե , վոր լավ թիմարելը ձիու կերի կեն և կազմում : Այս իշորին . մի քիչ չափազանցած ե , բայց վոր թիմարելը ձիու աշխատանակության և առողջության համար անսահման մեծ նշանակություն ունի , այդ արդեն անվիճելի յէ : Մարդիկ սովորաբար ամեն որ յերեսները լվանում են , իսկ շաբաթը մեկ անգամ ել բազնիս են գնում , բայց շատ քիչ են մտածում այն մասին , վոր ձին ել պետք և մաքուր լինի : Եթեր ձին չի թիմարվում (մաքրվում) , ապա թիմը հավաքվում է նրա մազերի արանքներում , և յերե ձին քրանում և հովանում ե , կեղեւ և կապում և փակում մարմնի ծոկութիւնները (կազմի վրա փոքրիկ ծակեր , զորոնք հասարակ աշքի համար տեսաննելի չեն) : Դրա հետևանքը լինում է ան , վոր արյունը լավ չի մաքրվում , վորդի հետեւ արյունը մաքրվում է չնչառության միջոցով , իսկ ձին , ինչպես և ամեն մի կենդանի , զրանց թիվում նաև մարդը , չելչում և վոչ միայն բերանով ու բթածակերով , այլև՝ մաշկով : Արյունը վաստ մաքրվելուց ձին սկսում և նիշարել , մազն սկսում և շաղմբել և ցից-ցից կանգնել մարմնի վրա : Բացի դրանից , կետուու ձիու մարմնը կարող և վոյլոսել կամ նույնիսկ քոսարեր տղերով ծածկվել , իսկ թե ինչպիսի զարչելի հիվանդություն և քոսը , այդ հավանարեն իմացել և ամեն մի դյուռացի պատերազմի շրջանում : Սոսկալի յե նաև , յերբ բուն են գնում վոյլիները : Նրանք այնքան արագ են բազմանում և այնքան սարսափելի տանջանք պատճառում ձիուն , վոր յեթե ժամանակին միջոցներ մեռք չառնովեն նրանց վոյնչացնելու համար , ապա ձին դրանից կարող և ստակել :

### Ինչպես թիմարել ձիուն

Ձին պետք և թիմարել որական յերկու անգամ—առավոտը՝ առաջին կերը տալուց առաջ և յերեկոյան՝ վերջին կերը տալուց առաջ . բայց յեթե ժամանակի պակասության պատճառով հարավոր չե որական յերկու անգամ թիմարել , ապա կարելի յե թիմարել մեկ անգամ՝ միայն առավոտները : Թիմարելու համար պետք և ձիասանը (քերիչ , դաշովի շերճապա) և խոզանակ զնել : Դրա համար մեծ ծախս չպետք ի անել , ընդամենը—յերեք ուսւրիք , բայց զրա փոխարեն ամրող յերկու տարի կարելի յե բանեցնել , յեթե միայն խամաժող վարվեն : Զիասաննրով կարելի յե մաքրել պարանոցը (վիզը) , միջը , կողքերը , փորը և վոտեները—մինչև ծնկները , բայց միայն մազի ուղղությամբ : Սունկը և վոտերի ներքեմի մասը պիտի մաքրել ծղոտի փնջով :

Զիասանբով չպետք է ամուր սեղմել ձիու մարմինը, վորովհետև ձին դրանից ցավ կ զգում և անհանգստանում, բայց և չափազանց թույլ չպիտի սեղմել, վորովհետև այս զեղգում ել ձիասանը չորացած կեղար չի մաքրում, այլ միայն խոսւա (խողտանք) և պատճառում ձիուն, վորն իրեն այս ու այն կողմ և զցում: Ձիասանը ձիու մարմինը քայլուց հետո ամեն անզամ պետք ե խոզանակով մաքրել, վորակեսդիմում մազից զուրս յեկած թեփը նորից հետ չըդնա սանրի հետ: Ձիու մարմինը պետք և մաքրել պարանոցից սկսելով, այն ել վոչ թե ախոռատանը, այլ բակում: Ձին այնպես պիտի կանգնեցնել, վոր նրա զյիսի կողմը լինի քամու հակառակ ուղղությամբ (այս զեղգում ձիու մաքրած մազերը չեն փոշուակի): Ձորացած կեղարը և թեփը հեռացնելուց հետո պետք և սանրով և խոզանակով մաքրել, սանրից հեռացնել թեփը և խոզանակով սրբի ձիու մարմնի այն մասերը, վորակեղով սանրն և տարբելու նախ մատին հակառակ, և ապա նրա ուղղությամբ: Այս զեղգում ամեն մի շարժումից հետո պետք և խոզանակը սանրով մաքրել, իսկ յերբեմն ել սանրը մաքրել զետնին բաղինեով (թիւթիւնկացնելով):

Ձիու պարանոցը, մեջքը, փորը և զագակը մաքրելուց հետո պետք ե միմիայն խոզանակով (առանց ձիասանի) մաքրել զլուխը, ապա ծղոտի փռնջով և խոզանակով մաքրել վուների ներքեւ մասը, իսկ այնուհետև մաքրուր և թաց լաթով (չորի կառուով) սրբել աչքերը, քթածակերը և թիրանը: Այժմ մոռու և միայն սմբակները մաքրել, բաշը սանրել, պոչը ուղղել, իսկ յերեկղասա և՝ նաև լվանալ: սրբով ել կերպանա ձիու թիմարումը: Մարտկները մաքրելու մասին կիսունենք առանձին:

Ձին թիմարելու համար կպահանջմի 30—40 րոպե, իսկ այլքան ժամանակ գյուղացին, վորքան ել զբաղված լինի նա, կարող ե ճարել: Ենթե գյուղացին ցանկանում ե, վոր իր ձին առողջ լինի, պետք և անզայման թիմարի նրան: Ենթե զյուղացին ամեն որ կանոնավոր թիմարի իր ձին և փոխի ձիու տակ յեղած թաց ցամքարը, ապա կարելի իր թիմարել միայն խոզանակով, առանց սանրի, և այն ժամանակ թիմարելու համար կպահանջմի ընդամենը 15—20 րոպե:

## ՎԻ ԳԼՈՒԽ.

### ԶԻՈՒ ԽՆԱՄՔԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՀԵՏՈ

#### Աշխատանքից հետո ձին լվանալը

Աշխատանքից հետո ձին արձակելով լծից՝ պետք ե տեսնել, թե արդյո՞ք չի քրտնել մաշկի այն մասը, վոր յեղել և անուրի (խամութի) տակ և մեջքի այն մասը, վորի վրա թամբիկն և գոտինել: Ենթե ձիու այլ մասերը քրտնել են, ապա պետք և սրբել ծղոտի փնջով: Բացի դրանից, ամառը պետք և ձիու այլ մասերը սրբելուց հետո ջրով մի լավ թրջել: Ձին ջարդվածքներ և ծեծվածքներ քիչ կունենա, յեթե ջրով միշտ թրջնեն այն տեղերը, վորոնց մասին խոսեցնեք: Գարնանը, ամառը և աշնանը, յերբ ճանապարհները փոշուա կամ ցենսուան են լինում, ձին լծից արձակելուց հետո պետք և վուտները ծնկներից ներքեն ջրով լվանալ և ծղոտի փնջով սրբել ներքեսից զեղի վեր (մազի հակառակ ուղղությամբ) և վոչ վերևեց դեպի վար: Ցուրտ յեղանակին, յեթե

ձին քրտնած է, լծասարքը միանգամից չի կարելի վերցնել նրա վրայից : Այսպիսի զետքերում առանց անուրը և թամբիկը վերցնելու, պետք է ձին տիտուսանց պահել մինչև քրոնիքը ցամաքելը, վորից հետո արգելն կարելի յէ վերցնել լծասարքը : Աւելի սահմանանքի ժամանակ պետք է բացի լծասարքը, ձին ծածկել նաև չուլով կամ կապերտով : Բառասուն բողեյից հետո լծասարքը կարելի յէ վերցնել, թողնելով միայն չուլը կամ կապերտը :

## Զիւլ խնամքը յերկար հանապարի գմալիս

Եւթե ձին սայլով կամ առանց սայլի յերկար ճանապարհ և զնում, ապա անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր 30 կիլոմ. անցնելուց հետո հանգստանա և կերակրվի: Բայց այս զետքում չպիտի մոռանալ, վոր քրտնած ձիուն չի կարելի վարսակ տալ: Այդ պատճառով մինչև քրտինքը ցամաքելը պետք է ձիուն խոռ տալ և ցամաքելուց հետո միայն ավելացնել վարսակ: Ճանապարհը շարունակելու առաջ չպիտի մոռանալ ձին ջրել: Յեթե ձին զնում և վաղքով և առանց սայլի, ապա տանից կամ այն կետից, ուր նա զնում է, զեռնես 8—6 կիլոմ. հետո պետք է նրան ջրել: Այսպիսի զետքերում պետք է վարդիլ հետեւյալ կանոնի համաձայն: — Ձիուն ջրասակից մեկ կիլոմետր հեռու պետք է ձիու վաղքի թափը մեղմել և այրել կիլոմետրն անցնել քայլով: Ջրատեղին հասնելով՝ ձիուն միանդամից կարելի յէ 12 լիոր ջուր տալ, յեթե նույժիսկ նա քրտնած լինի կամ դեռևս բոլորովին ցամաքած լինի: Բայց խմելուց հետո ջրատեղում չի կարելի կանգ առնել, այլ պետք է անմիջապես շարունակել ճանապարհը: Ակցորում մոռապլրազես մի քառորդ կիլոմետր պիտի զնալ քայլով, իսկ հետո վաղքով, վորպեսզի մինչեւ տուն հասնելը ձին նորից տարանա:

Այսպես են վարդում, վորպեսզի ձին տուն հասնելով՝ ծարավ լինի և մինչեւ լավ ցամաքելը սովորված չլինի մոտ 2—2½ ժամ մնալ առանց կերի: Վաղքով զնալիս, մանսումնոց չող ժամանակ, ձիու կոկորզը ցամաքում է, և ձին տուն հասնելով՝ չի կարողանում կերն ուտել: Ահա հենց այդ պատճառով ել ձին պետք է ջրել ճանապարհին: (Խիստ չող ժամանակ, ձին ջրելուց հետո ողտակար է նրա դլիսին և մեջքին մոտ 6 լիոր ջուր ածել):

## Աշխատանքից հետոն ձիուն ջրելը և կերակրելը


Քայլելով ժանր տշխատանք կատարելուց կամ վաղքից հետո առանձնապես զգույշ պիտի ջրել և կերակրել ձիուն: Քրտնած ձիուն բոլորովին չի կարելի ջուր և վարսակ տալ, այդ պատճառով տուն (կամ այնուղղ, ուր զնում էն) հասնելուց հետո ձիուն պետք է խոռ տալ: Յերբ ձին խոռն ուտի վել ջացնի և բոլորովին հովանա, (այսինքն 2 ժամից հետո) նրան կարելի յէ 3 լիոր ջուր և վորոշ քանակությամբ վարսակ տալ, իսկ վարսակն ուտելուց մի ժամ հետո կարելի յէ 12 լիոր ջուր տալ: Յեթե ձին քրտնած ժամանակ կապից առաջակցի և կուշտ-կուշտ ջուր խմի, ապա անհրաժեշտ և այն զեղքում սատր լուր ածել ձիու վրա և հետաձ (վորպեսզի ժամանակ չկորչի լծելու վրա): Վայլով անցնել մոտ հարյուր մետր, իսկ այնուհետև վաղքով, վորպեսզի ձին քրտնի: Այս անհրաժեշտ և անցել նույժիսկ այն զեղքերում, յերբ ձին յերկար ճանապարհ և անցել և հոգինած է, այլապես նա սերակի ունասուի բորբոքում կատարած կամ քնչպես ասում են՝ չըրով կընկնի:

ՍՄՐԱԿՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ՁԻՆ ՊԱՅՏԵԼԸ

Մմրակի հիմանդություններն ու անկանոնություններն առաջ են դալիս ձիու անուշաղիք և վատ խնամքից, վատ պայտելուց, ախոռը վատ մաքրելուց, յերբ ձին ստիպված և լինում կեզակ և հեղուկ գոմազրի մեջ կանգնել, ինչպես և ձին քարքարոս տեղերում և պինդ ճանապարհներում բանեցնելուց: Դրազում շատ քիչ և պատահում, վոր պայտարը ձին կանոնավոր և լավ պայտի, այլ պատճառով գրաւդացին պետք և այս գրքույին ուշագրությամբ կարդա և պայտարին ցուցմունքներ տա, յեթէ ձին պայտելիս նա չի վարպի այնպես, ինչպես պետք է:

Սմբակները մաքրելը

Պայտարը հանցանք և գործում, յերբ պայտը հարմարեցնելով ձիու վորին, առանց սպասելու վոր սառչի, տաք-տաք կոցնում և սմբակին. դրանից սմբակը գտննում և փխուն, գյուրաբեկ և հիմանդանում է: Անհրաժեշտ և միշտ հետեւ և պահանջնել, վոր պայտարը (նալբանդը) տաք պայտը նախ ջրի մեջ զցի (խոկ ձմեռը՝ ձյան մեջ) և առաջ կոցնի սմբակին: Բացի ջրանից՝ սմբակը մաքրելիս պայտարները շատ են տաշում (փորում, հանում) ներբանն ու սլաքը և վատ են աստիճացնում այնաել, վորտեղ սմբակի յեղջու-



Նկ. 45. Կանոնավոր սմբակի ստորին մասը: 1—յեղյերապատը, 2—բրանիք, 3—յեղյերապատը, 4—փափռեկ մասը, 5—միացուցիչ անկյուն երազը, 6—ապիսակ զիճը, 7—սլաքի միջին սկազ, 8—ուստի կողային սկազները, 9—ուստի վերին մասը, 10—երանի հյութերը, 11—միացուցիչ անկյուններ.

Նկ. 46. Առջիկ վատի պատը, վոր կանոնավոր կերպով դրված և սմբակի վրա.

ըլ անկյուն և կազմում: Նկարի վրա այդ տեղը ցույց է տրված 11 թվանշանով: Այդպես չպետք և անել և առաջ թե ինչու. —յերբ ներբանը շատ են տաշում՝ փոփառնակ միայն վերևի խորառություն (անհարթ, անհավասար) չերտը հեռացնելու, ապա դրանից ներբանը բարակում է, և ձին անհարթ տեղերում աշխատելով՝ ջարդում և սմբակը և սկսում է կազալ: Գետք և կտրտել, հեռացնել ներբանի ստորին մակերեսի վերին անհարթ չերտը միայն: Յե-

թե ոլաքից հանենք վոչ միայն քրքրված մասերը և անհարթությունները, այլև դրանց տակ յեղած շերտը, ապա ոլաքը կրնկի մասում լոյն չէ լայնացնի սմբակի, յերբ ձին այդ վուր գետին զնիք: (Իր տեղում արգելա տօւել ենք, վոր ոլաքը սմբակի մեջ զսպանակի զեր և խաղում): Հենց այդ պատճառով յեղջերապատը չի կարելի կտրել այն մասում, վարուել նաև անկայուն և կազմում: Ենթե անկյունը գանակով կտրենք, ապա այդ նույնն է, թե քանդում ենք զսպանակը: Բացի դրանից, յերբ ձին բանում և, վորքան հնարավոր և սլաքը պետք և հաճախ շոշափի հոգը. այդ վիճակում սլաքը լույն և աճում, ամելի առածգական և գառնում: Այստեղից յերեսում և, վոր յեթե սլաքը շատ կտրենք, ապա նա հողին չի հասնի, ուրեմն և չի շոշափի հոգը: Հետեւարար, պայտարին կարելի յե թույլատրել, վոր ոլաքից ու ներքանից կտրի վերեւի անհարթ և մեռած շերտը միայն, վորն իր խորտուրությամբ նման է թեփերի: Զակետք ե թույլ տալ, վոր պայտառող սմբակի յեղջյուրը առվիքիչով մաքրի վերեւից, վորովհետեւ այս գեղքում առվիքիչը յեղջյուրի վերեւի ծածկոցը, այսպես կոչչած «չիրը» քերթում և: Սմբակն առանց վերեւի ծածկի չորանում և և նրա վրա ճեղքեր են առաջ գալիս, իսկ այդ ճեղքերը լցովում են զոմաղբի մեջ յեղած վնասակար հեղուկներով, վորոնք ուտում են սմբակը, և ձին սկսում և կուղալ: Գետը և հետեւել նաև, վոր պայտարը կանոնավոր կտրի սմբակի յեղջյուրը, այսինքն ամելի չկտրի, քան հարկավոր և և ամելիորդ մաս չթողնի: Եաւ հեշտ և ստուգել, թե վո՞ր չափով կանոնավոր և մաքրված սմբակի յեղջյուրը. գրահամար բավական և իմանալ, վոր յեթե սմբակի յեղջյուրը կանոնավոր և մաքրված, ապա սմբակի թաթը առջևից՝ թեք ուղղությամբ յերեք անդամ յերկար և հետեւի կրկնամասից: իսկ հետեւի վոտի սմբակի թաթը, նույնական անդամ թեք ուղղությամբ, յերկու անդամ և յերկար կրնկամասից:

Ենթե սմբակն առաջուց վատ և մաքրված, ապա առջեկի վոտի թաթը կրնկամասից ամելի յե լինում վոչ թե 3, այլ 4—4 և կես անդամ, և ձին այնուհետ և քայլում, կարծես թե սոլեր հագած լինի: Այսպիսի գեղքերում մի անդամ միայն պայտելով հնարավոր չե թաթն ուղղել, անհրաժեշտ և ստիճանաբար, 5—6 անդամ պայտելով ուղղել սմբակի թաթը:<sup>2)</sup>

Առջեկի վոտի պայտի այն յերեսը, վորը շոշափում և սմբակը, պետք և թեք լինի: Թե քությունը պիտի սկսվի պայտի միջին մասից (մեխի ծակերից դեպի ներսի ծայրը: 49-րդ նկարի վրա ցույց և տրված առջեկի վոտի կանոնավոր պայտը): Այդ պայտի վրա թեքությունը ցույց և տրված մուր գույնով: Այդ թեքությունն անհրաժեշտ և, վորովհետեւ առջեկի վոտի ներբանը հարթ և, և յեթե թեքությունը չլինի, պայտը կծարգի ներբանը: Հետեւի վոտի ներբանն ամելի գողազոր և (ներս և ընկած), այնպես վոր ներբանը չի ջարգի, ուրեմն և այդ վոտի պայտը կարող ե թեքություն չունենալ: Վորովհետեւ աշխատանքի ժամանակ մեծ ծանրությունն ընկնում և սմբակի թաթի վրա, այդ պատճառով պայտի այն մասը, վոր թաթի մոտ և ընկնում, պետք և հաստ լինի, իսկ կրնկի մոտ՝ բարակ: Պայտի առջեկի սեպը հետեւի սեպերից մի չփէ փոքր պիտի լինի: Ենթե ճանապարհը ուղղան (լործուն, ուկուն) լինելու պատճառով անհրաժեշտ և ձին պայտել սուր սեպավոր

<sup>2)</sup> Սմբակի թաթ կոչվում և սմբակի առջեկ մասը՝ պակից սկսած մինչև պայտը Սմբակի կողերը կոչվում են կողապատեր, իսկ սմբակի հետեւի մասը՝ սմբակի կրունկի:

պայտերով, առա ներսի սեղը (այսինքն հետեւ այն սեղը, վոր մոտիկ և մյուս, վոտին) անպայման բութ պիտի լինի, վորպեսզի ձին իրեն չպայտահարի:

### Պայտելու ժամանակը

Զգետք և մոռանալ, վոր ձին շուտ—չուտ պայտելը շատ վնասակար է: Հանուխ պայտելուց սմբակը փփրուն և զառնում: Այդ պատճառով, աշնանը և դարձան սկզբին, յերբ ճանապարհները բավական յերկար ժամանակ սղզան են լինում, սեղածք և ձին պայտել զործարանային պոտուտակավոր սեղեր ունեցող պայտերով և գոյ' ինքնաշխ պայտերով:



Այդ սեղերին լավ պիտի հետեւ, և հենց վոր նրանք մաշվեն պետք ե յետ պոտուտակելով հանել և նրանց տեղ նորերը պոտուտակել: Այս պոտուտակավոր սեղերը շատ հարմար են, վորովհետեւ նրանք հնարավորություն են տալիս, վոր ձին քայլի միջու սուր սեղերի վրա և, բացի գրանից, կարիք չի լինում շուտ—չուտ փոխել: Բայց, ի հարկ և, ամեն բան չափ ունի: Ենթամոն դրազացիք խնդրում են ձին այնպես պայտել, վոր պայտը չպոկվի մինչև վերջնականացն մաշվելը: Հաճախ պատճառում ե, վոր ձիու պայտերն այլքս չեն յերեսում, վորովհաւ նրանք սմբակի մեջ են մտել: Այդ շատ վնասակար է: Դրանից սմբակը սեղմքում, կործնում և իր կանոնավոր ձեռք և ցավ և պատճառում ձիուն, ճիշտ այնպես, ինչպես նեղ կոշիկը ցավեցնում և մարզու վոր: Հենց այս պատճառով ել պիտի պահանջնել, վոր վրապետը նեղ պայտեր չինի:

Ամիս ու կեսը մեկ անգամ ձին անպայման պետք և պայտել, յեթե նույնիսկ պայտերը մաշված չլինեն:

Սմբակը մաքրելուց և պայտը պատրաստելուց հետո պետք և պայտը դնել սմբակի վրա և այնպես անել, վոր նա մի քիչ սմբակի ծայրից դուրս գա—մուտավորապես այնքան, վոր վերեից նրա վրայով կարելի լինի յեղանգը ըսելով սահեցնել:

### Անկանոն պայտելը

Գետք և հետեւնակ, վոր սմբակի և պայտի միջև արանքներ չմնան, վորով—հետեւ փոքրիկ քարերը կմտնեն այդ արանքները և չարդվածք կառաջացնեն:




Նկ. 47. Պայտի կանոնավոր դրվածք. Նկ. 48. Պայտի անկանոն դրվածք.


Այդ պատճառով, յեթե պայտը լավ չի նստում սմբակի վրա, պետք և պայտելուց առաջ ուղղել: Սմբակի վրա լավ նստած պայտը ցույց և տրված 46-րդ և 47-րդ նկարներում, իսկ կանոնավոր չշակածը՝ 48-րդ նկարում:

Սմբակը և պայտը պատրաստելուց հետո, յերբ պայտարն սկսում է պայ-

տել, պիտի հետեւ, վոր մեխանաս շանիք: Մեխանաս և կոչվում, յերբ անկանոն խփած մեխով փոխանակ սմբակի յեղջրի մեջ մտնելու, մտնում և սմբակի մսի մեջ, և ձին դրանից կաղում է: Մեխանասը ցույց և տրված 50-րդ նկարի վրա: Նույն նկարի վրա, մախից ցույց է արգած կանոնադրոր խփած մեխով, իսկ աջից՝ շատ յերես խփված մեխով, վորը շատ հեշտությամբ թե՛ ինչը կորոկիք



Նկ. 40. Աշեի պայտը կանոնավոր թեխուրյամբ.



սկ. 30. Պայտած սմբակի կորիգածք:  
1.—սմբակի վոսկը, 2.—յեղջերապատը, 3.—ներքամբ՝ հենված պատշաճն, 4.—լավ խփած և զուրբ կոր մնիս, 5.—յուրա խփած և զուրբ վախ կորն մնիս, 6.—մեխանաս, 7.—ծակած տեղը, 8.—սմբակի մաս մաս:

Ա. թե՛ կզսկի սմբակի մի ժամը: Յեթե մեխով սիալ ուղղությամբ և դնացել, ավելի ճիշտ՝ սմբակի մսի մեջ և տեղել, ձին ինչը իմաց կտա՝ վուաքը մարզու ձեռքից իսկույն դուրս քաշելով:

Կանոնավոր խփված մեխովը բոլորն ել դուրս զիտիք գան սմբակի արտաքին մասը միևնույն գծի վրա: Յեթե մեխանաս պատահի, պետք ե պահանջնել անմիջապես հանել մեխով և խփել մի ուրիշ տեղ. նույն տեղում մեխով խփել չի կարելի, վորովնեառ նոր մեխն անպայման ծակած տեղով կդնա: Ամենի լույն և վեց մեխի փոխարեն հինգ մեխ թողնել (կամ թթը, յեթե ընդամենը ութ մեխ ե), քան թե նույն տեղից յերկրորդ անգամ մեխ խփել:

Զպետք ե մոռանալ, վոր պայտելու համար ձիու վուաը չի կարելի կապել այունից կամ մի այլ անշարժ տեղից: Խնչպիսի մի յել մոր լինի, լավ պայտարը կարող ե պայտել առանց վուաը այունից կամ մի այլ անշարժ տեղից կապելու, կարող ե պայտել հենց միայն մեռքի ովնությամբ: Մայրանեղ դեպքում միայն, յեթե ձին հանգիստ չի կանգնում, այլ իբրև այս ու այն կողմ և դպում, կարելի յե ըրթունքը թոկով սեղմել: Անշարժ տեղից կապելու դեպքում ձիու վուաը հեշտությամբ կարող ե դուրս ընկնել (տեղից հանվել) և այն ժամանակ ձին խեղանդամ կդառնան ու այլեւ, բացի մորթելուց, ուրիշ բանի պետք չի գա: Ձին պետք ե պայտել անպարհան լավ վարպետի ձեռքով: Վորքան ել անկանոն լինի սմբակը, այնուամենայնիվ լավ պայտարը 5-6 անգամ պայտելուց հետո կարող ե ուղղել սմբակի ձեռ:

Պայտելիս պիտի հետեւ, վոր սմբակը համապատասխանի վուաների դրվածքին: Յեթե ձիու կոճերը շատ զիք են, ինչպես ցույց և տրված 41-րդ նկարի վրա, ապա սմբակը մաքրելիս պետք ե թաթը ամենի յերկար թողնել և, ընդհակառակն, յեթե կոճերը փափուել են, պետք ե կարճացնել:

### Սմբակի խնամքը

Սմբակի համար խնամք տանելիս պետք ե աշխատել, վոր յեղջերապատահնը չքայլայիք: Դրա համար պետք ե ամեն որ ախտառանից հեռացնել:

գոմաղը և հետևել, վոր հատակը միշտ չոր լինի: Յերեկոները ձիու վոտների տակ շամքար պիտի ածել: իբրև ցամքար կարելի յե բանեցնել վարսակի ծզոտը, փայտի թեփը, մանրած, փոշեցրած տորֆը և այն, նայելով, թէ դրանից վո՞րն ե ամելի եժան նստում: Զին թիմարելիս անպայման պետք է բարձրացնել ամեն մի վոտը և բութ կեռով կամ ուղղակի փայտի բարակ ձողով պոկոտել նրաններին կպած թրիքը և ամենայն ինամքով մաքրել ներանի ու պայտի թեքության միջն ընկած տարածությունը: Ամբակը թրքից մաքրելուց հետո պետք ե սառը ջրով լվանալ: Ձիու սմբակները յերեք չպետք ե ձյութ կամ անխիլի յուղ քսել, ինչպես սիրում են անել գյուղացիներից շատերը—ցույց տալու համար, թե ինչպես լավ են փայլում իրենց ձիու սմբակները: Այդ փայլը նախ յերկար չի մնում (հենց առաջին իսկ փոշուց փայլը կորչում ե) և ապա վնասակար ե: Զպետք ե զնել այն յուղերը, մազերը, ձյութերը, վոր քաղաքներում առաջարկում են ձիու սմբակները փափկացնելու համար: Մաքուր չուրը ամեն տեսակի յուղից լավ ե: Սըրակը վնասվում ե թե՛ ասստիկ չորությունից և թե՛ թացությունից: Չորությունից սմբակը փիրուն ե զառնում, իսկ թացությունից՝ շատ փափկում: Դրա համար ամառը, մանավանդ, յեթն յեղանակը չորային ե, ոգտակար և շարաթը մեկ անգամ ձին մի դիշեր կանգնեցնել կամի վրա, բայց այնպես, վոր սմբակները մինչև պասկը թաղվեն կամի մեջ: Աշնանը, ձմեռը և զարնան սկզբին ձիու տակը պետք ե չոր ցամքար լինի: Ձիու սմբակի հիվանդությունների մասին կիսունենք այս գրքի վերջում:

### VIII ԳԼՈՒԽ.

## ԼՇԱՍԱՐՔԻ ԻՆԱՄՔԸ ՑԵՎ ԼՇԵԼ Լծասարքը հարմարեցմելը

Լծելիս սովորաբար ուշադրություն չեն դարձնում, թե վո՞ր չափով և կանոնավոր լծված ձին: գյուղացին այս ամենը կատարում ե շտապ և միայն այն չափով, վոր ճանապարհին ձին չարձակվի լծից, մինչդեռ ձիու համար շատ մեն նշանակություն ունի կանոնավոր լծելը: Մեն նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե ինչպիսի լծասարք ենք բանեցնում: Յեթե ձիուն մեծ անուր (խամուտ) հագցնեն և քայլով կամ վազքով բնու քաշել տան, ապա ձիու պարանոցը և ուսերն անպայման ջարդվածքներ կստանան: Իսկ լծասարքին նայելիս հաճախ կարելի յե տեսնել, վոր նա պատռության ե, որինակ՝ անուրի (խամուտի) թաղիքը կամ պոկվել ե և կամ չափազանց կեղտութել: Լծասարքի նկատմամբ վոչ պակաս խնամք պիտի լինի, քան ձիու խնամքն ե: Ամեն անգամ աշխատանքից հետո անուրի (խամուտի) և թամբիկի թաղիքները (քեչաները) պիտք ե չորացնել ինչպես հարկն ե, իսկ յեթե նբանք քրտինքից կամ փոշուց կեղտութել են, անհրաժեշտ ե զանակով քերել և տաք ջրով ու սապոնով լվանալ: Յեթե լծասարքն անձրելից թոշվել ե և ճանապարհին ցեխութել, ապա պետք ե ջրով լվանալ և լոսվ չորացնել: Անուրի (խամուտի) փականը, փոկերը, յերասանները և լծասարքի մյոււ մասերը թոշվելու գեպօտմ, յեթե նրանք կաշվից են պատրաստված, անպայման պետք ե գտան ձյութ քսել: Ջրաթից չօսելու գեպօտմ կաշին կչորտնա, շատ չուտ կմաշվի և կեների ձիու մարմնի այն մասերը, վորոնց հետ շփվում ե: Անուրը (խամուտը) լավ նստած պիտի լինի ձիու վրա: Յեթե ձին նիշարել և անուրը մեն ե, այն դեպքում չպետք է անուրը վեր բարձրացնել և դրանով

ել ապահով զգալ, այլ անհրաժեշտ և թաղիքի մի նոր կտոր (նույն յերկարության և լայնության, ինչ վոր անուրի վրայինն ե) ավելացնել անուրի թաղիքին: Այս կատարելուց հետո այլևս ձիռ վիզը և ուսը ջարդվածքներ չեն ստանալ:

Եթե ձին բարձր մնդայ ունի, ապա այդպիսի ձիռ վրա այնպիսի թամբիկ չպիտի դնել, վորը կարող և կոչել մնդավին և մեջքին, վորովհետեւ ծանր աշխատանքի ժամանակ ձիռ մնդավը և մեջքն անպարհան կինասպեկնել:

Լծելուց առաջ պետք և խմանալ, յեթե լծասարքը լավ դրության մեջ և, կաշին փախուկ և և անուրի ու թամբիկի թաղիքը չոր, նոր միայն լծել ձին: Թաղիքը չկեղտութելու համար լծասարքը յերբեք գետնին չպետք և դնել:

### Կանոնավոր լծելը

Վատ և անկանոն լծելուց ձին խեղանգամ և դպունում, անպետքանում և, այդ պատճառով անհրաժեշտ և խմանալ, թե ինչպիսի անկանոնություններից պետք և խորապին:

Ձին կանոնավոր լծելու համար ամենից առաջ անհրաժեշտ և ստուգել, թե արդյո՞ք բավականաշափ սարքին են սայլի կամ սահնակի կողաքեղիները (լծափայտերը): Եթե կողաքեղիները կարճ լինեն՝ վազքի ժամանակ ձիռ վազքահողը կարող և սիփել սայլի կամ սահնակի առջեկի փայտերին, առաջացնել պիստակներ, վորոնց մասին մենք խոսել ենք հետեւ վոտների պակասությունները նկարագրելին: Այլին վատ հետեւանք կստացվի, յեթե կարճ կողաքեղիներով սայլի կամ սահնակի լծված ձին վորեւե բանից խրոնի և սկսի փախչել: Այն ժամանակ նա վոտներն ել ավելի ուժեղ կերպով կիսվի սայլի կամ սահնակի առջեկի մասին և ցավից խելքը կերպոցնի: Առաջուց կարելի յև ասել, վոր այդպիսի գեղքերում ձիռ վոտները բոլորովին կայլաղակինեն, և ձին խեղանգամ կդառնա: Բայց շատ յերկար կողաքեղիներն ել լավ չեն, վորովհետեւ այդպիսի կողաքեղիների լծված ձին ըեռը մեծ դըմքարությամբ կըսածի: Կանոնավոր պիտի համարել այն դրությունը, յեթե սայլի կամ սահնակի առջեկի մասից մինչև ձիռ վազքահողը վոչ ավելի և լոչ պակաս, քան 70 սանտիմետր ե:

Անհրաժեշտ և նաև հետեւել, վորանազի կողաքեղիները հավասար լինեն իբենց յերկարությամբ և վորովհետի քեզու փոկերը ձգված լինեն համաշափ: Եթե քեզու փոկերից մեկը մյուսի ձիռ լինի, այն դեպքում սայլը կողքէ վրա կլոնա և ձիռ ուսերից մինչ կըսրպի:

Այդ նույն պատճառով պետք և մի լավ ստուգել նաև նոպանները: Եթե նրանցից մեկը մյուսից կարճ լինի, ապա ձիռ ուսը ճիշտ այնպիսի ջարդվածքներ կստանա, ինչպիսի ջարդվածքներ ստանում և անհամաշափ ձգվածքներից:

Եթե վերջապես ձիռ ուսը ջարդվածքներ կստանա, յեթե ձին լծենք չեղակի, այսինքն՝ յեթե աղեղը մի կողքից ավելի մոտ լինի կողաքեղու ծարքին, քան մյուս կողքից: Ստուգելու համար, թե արդյո՞ք ուղղի և դըմքած պիտի աղեղը և աղեղը աղաքը կարգի, վոր աղեղի ծայրերը կողաքեղիների ծայրերից համար չեն հետացած, այն դեպքում ուղղել և տպա կտպել անուրի փոկը:

Զին լծելու գործում մի շատ կարևոր սխալ ել և կատարվում . մեր մի շաբք զայրերում զյուղացիք ձին լծում են թամբիկի մեկ փոկով և առանց փորքաշի (փորկապի) : Այս, իշարկե, անզայժան մեծ սխալ է : Փորքաշը թանկ բան չե, իսկ լծելու գործում նա անհրաժեշտ է, փորովհետեւ մին վաղելու ժամանակ, յեթե փորքաշ չկա, ամբողջ լծասարքը ձիու ամեն մի շարժման հետ վեր ու վար և թոչում և անուրով ջարդում ձիու պարանոցը, իսկ թամբիկով և թամբիկի փոկով՝ մնաղավը : Բացի դրանից, սարից իջնելիս փորքաշը ձիուն ոգնում է, վոր բեռը ձիու վրա չընենի : Բայց յեթե թամբակալի վրա անրափոկիկը չկարեն և մին լծելու ժամանակ նրա (թամբակալի) միջով փորկապին անց չկացնեն, այն գեղքում մին գնալու ժամանակ փորքաշը ձիու կուրծքը կքերի մինչ այն աստիճան, վոր արյուն զուրս կգա: Պետք ե ուշաղբություն զարձնել, վոր թամբի փոկը փորքաշի հետ միասին կողաքեղիների վրա կանոնավոր՝ իրենց տեղում փաթթված լինեն, այսինքն՝ յերբ մին անուրին հենվի, կապը պետք ե ընկնի թամբակալի ուղիղ դիմացը : Իսկ յեթե անրափոկիերն աղեղին մոտ են փաթթված և կամ, ընդհանրապես, անիվներին են մոտ, այն գեղքում թամբիկը կջարդի միջում, վորովհետեւ թամբիկը չեղ գերք բանելով՝ կսկսի վոչ թե իր ամբողջ մակերեսով մնչել մնաղավը, այլ միմիշայն մի մասով: Պետք ե հիշել նաև մի կանոն՝ չպետք ե ձիու զլուսի սանձով խիստ վերև բարձրացնել: Վորքան բեռը ծանր լինի, այնքան ավելի թույլ պիտի պահել սանձը, վորպեսզի մին հնարավորություն ունենաւ ուղածի չափ իջեցնել զլուսի: Այս գիրքում մին ավելի յե կարսղանում լարել իր մնջքը և ավելի ուժեղ թափով և հենվում անուրին:

Համարյա միշտ ել կարելի յե տեսնել, թե ինչպես մին լծած ժամանակ անրափոկիերը կապերով չեն ամբացված կողաքեղիներին, այլ, սովորաբար, անրափոկը մի կողմից ընկած է ձիու մեջքին, իսկ մյուս կողմից՝ քարշ և գալիս զետնին, փոխանակ կանոնավոր կերպով ձիու կողերին զոնվելու: Այս գրությունը թե՛ անկանոն և և թե՛ վասնավոր: Սարից իջնելիս կախը ընկած անրափոկը համարյա բոլորովին չի ոգնում ձիու յետ պահել առաջ մզգող բեռը, և սայլի տուաջամասը խիստ և ձիու վոտներին:

## IX ԳԼՈՒԽ.

### ՄԱՆՐԱԾ (ՀՂԻ) ԶԱՄԲԻԿԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ՆՐԱՆ ԱՇԽԱՏԵՑԵԼԸ

Կրկնվող գուգավորումներ

Զուգավորութից հինգ—վեց որ հետո զամբիկը նորից պետք ե հոգաւորիկ մոտ տանել: Յեթե զամբիկը հովատակին մոտ չթողնի, ապա պետք է յենթագրել, վոր նա արդեն հղիացել և առաջին զուգավորութից: Այդ բանը լավ իմանալու համար առաջին զուգավորութից 10 կամ 12 որից հետո պետք ե զամբիկը նորից հովատակի մոտ տանել: Յերբեմն պատահում ե, վոր զամբիկը թե՛ առաջին և թե՛ յերկրորդ անգամ մոտ չի թողնում հովատակին, բայց հետո, ամառվա կիսին, հանկարծ նորից զուգավորվելու տրամադրություն և ցույց տալիս: Այսպիսի դեպքերում զամբիկը նորից չպետք ե հովատակի մոտ տանել, վորովհետեւ նա, չնայելով իր տրամադրության, կարող է արդեն հղիացած լինել և կրկնակի զուգավորութից կվիշի (կըուռակատի):

թացի գրանից, բեղմնավորման լավ ժամանակն անցած պիտի համարել, վորովհետեւ յերբ զամբիկը բեղմնավորվում է ամսովա կիսին, ուզա շատ վըտանդավոր և Հաջորդ զարնանը բանցնել նրան, քանի վոր ծանր աշխատանքից նա կարող է անժամանակ ծնել ու սատկել և կամ լավագույն դեղքում քուռակը սատկած կծնվի: Ենթե ընդունենք անզամ, վոր վոչ մի վնաս չըպատահի, և զամբիկը ժամանակին հաջորդությամբ կծնի, այնուամենայինից այն անհարմարությունը կա, վոր ամսովա կիսին ծնված քուռակը մինչեւ ձեռն յի ամրանա և այնուհետեւ ել վաստ կզարգանա:

Զամբիկն իր ուժերի մի մասը տալիս և քուռակին (ժորուկին), որա գոյանալու հենց առաջին որերից մինչեւ ծնվելը: Այդ պատճառով ծանրած զամբիկի խնամքը պետք է տարօվի հատուկ ուշադրությամբ, իսկ նրա կերպ պետք է լավ վորակ ունենա: Վաստ կերից քուռակը կարող է սատկել, և զամբիկը կլինի:

### Վիժումները և նրանց պատճառները

Լավ հասկանալու համար, թե ծանրած զամբիկի խնամքն ի՞նչպես պետք է տարօվի, ամենից առաջ անհրաժեշտ և պարզել այն բոլոր պատճառները, վորոնցից առաջնամասը են զամբիկի վիժումները: Զամբիկը վիժում՝ և՝ 1) յերբ փորը վնասվում է, 2) յերբ զամբիկին այնպիսի կեր են տալիս, վորից փորը սաստիկ փշվում, ուռչում է, որինակ՝ աշորայից կամ որա հասկերից, 3) յերբ ձին արածեցնում են սան ցողով ծածկված արոտում, 4) հանխակի փորկապությունից, 5) չափազանց սառը ջուր խմեցնելուց, 6) անձրևի ժամանակ մթերած խոտից, 7) յերկար ժամանակ ընկած խոտից, 8) բորբոսնած խոտից, 9) յեղյամով ծածկված արոտում արածեցնելուց, 10) զուգամշտումից, յեթե մինչ այդ զամբիկն արգեն ծանրած և յեղել, 11) ժրուելուց, յեթե քրոնած զամբիկը կանգնի միջանցիկ քամու առաջ, 12) սառը ջրում լուսացնելուց և 13) ախտուատն հատակի թեքությունից, յերբ ձիու գլխի կողմն ավելի բարձր և լինում, քան զավակինը: Բացի դրանից, զամբիկը վիժում և նաև վորով հիվանդություններից, որինակ՝ թոքերի բորբոքումից, ինչպես և ծանր աշխատանքից կամ արագ դնալուց: Վերջին յերկու դեպքում ձին սովորաբար վիժում և հզիության վերջին ամիսներին, այսինքն՝ 8-րդ և 12-րդ ամիսների մինչև ընկնող ժամանակաշրջանում: Առաջուց շայց արգած պատճառներից մին կարող է վիժել տարբեր ժամանակներում, բայց ամենից հաճախ վիժումները լինում են հզիության 3-րդ, 4-րդ և 5-րդ ամիսներում:

### Մանրած զամբիկի աշխատանքի չափը

Առաջին յոթին ամիսը ծանրած զամբիկին կարելի յերանցնել վոչ ծանրածին հավասար: Ութերորդ, ինեւերորդ և տասերորդ ամիսներին չի կարելի զամբիկը ծանր աշխատանքի մեջև և վաղքով քշել (արագ դնալուց քրուսել (ժորուկը) չնշարգելություն և ստանում և խեղզվում է): 11-րդ ամասը մին կարելի յերեն միայն քայլով դնալու և վոչ վաղեցնելու համար և այն ել բնույթ յերկու ցեղաներից ավելի չպիտի լինի և վոչ ել ճանապարհը պահպար: 12-րդ ամսից սկսած մինչև ծնելը լծել բոլորովին չի կարելի, բայց սրակած յերգու մնագամ՝ առաջնամբը և յերեկոները, ամեն անզամ մոտ մեկ ժամով պետք է մաս ածել: Այս կարևոր և անել նրա համար, վորպեսզի մին լավ ժարոսի կերը, նենդաւ ժամանակ անհրաժեշտ ուժն անենաս և հիշան-

զաղին յերելուր թիթեր չառաջանան : Խոկ յեթեն ձին թողնեն անշարժ վիճակում , նա կդերանա (կչաղանա) . չաղ ձիկերն ավելի քժվար են ծնում : Ծնելուց վեց կամ ութ որ առաջ զամբիկի կուրծն ուժեղ կերպով ուռչում ե , աճուկները հերո են ընկնեամ և ծննդաբերական անցից քիչ-քիչ լորձյուն ե հոսում : Զամբիկը սովորաբար գիշերն ե ծնում , այդ պատճառով ձիատերը պատրաստ պիտի յինի ոգնելու ձիուն , յեթէ դրա կարիքն զգացվի : Ծնելու նշանները (վորոնց ժաման խոսեցինք քիչ առաջ) յերեվալուց հետո ամեն գիշեր , չորս կամ հինգ անգամ , պետք և մտնել ձիու ախոռը և տեսնել , թե արդյո՞ք ծնելու ժամը չի հասել :

## X ԳԼՈՒԽ .

### ՄՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՈՒՆ ՈԳՆԵԼԸ

Ի՞նչ նշաններով կարելի յե իմանալ , վոր ձին շուտով ծնելու յե

Մնող զամբիկին ոգնության ցույց տալու համար ձիատերը յերեկոյան արդեն ձեռքի տակ պետք ե ունենա ճրագ , լուցկի , յերկու գույլ տաք ջուր , մաքուր փալաս , սապոն , (ոճառ) , սրբիչ և մեկ ու կես շիշ ձիթապտղի ձեթ (զեյթունի ձեթ) : Ծնելուց անմիջապես առաջ զամբիկին սկսում ե անհանգըստանալ , հաճախ և արտօաթորում ու միզում և փոփոխում ե տեղը : Այս նշանները ցույց են տալիս , վոր ձին արդեն ծնելու վրա յե , այդ պատճառով ձիատերն այլևս չպիտի հեռանա նրանից :


Զամբիկը պառկում ե , ծննդյան ցավերը (յերկոննքը) սկսվում ե հետզհետեւ ուժեղանում են , այնուհետև ուժեղ ցավերից սաղմնապարկը պատռվում ե և մտրուկը (քուռակը) սկսում ե մզել զեպի դուրս : Թանի զեռ ծնելու ընթացքը կանոնավոր ե , կարիք չկա , վոր ձիատերը փորձ անի ոգնելու , քայլ համենայն դեպս նա պետք է պատրաստվի այդ ոգնության համար , թերեւ դրա կարիքն զգացվի . ձիատերը պետք և ձեռքի յեղունդները կարծ կարիք , ձեռքերը մինչև արմունկները սապնով լվանա : Դրանից հետո լվացած ձեռքերով վոչինչ չպետք ե վերցնի , վորպեսպի նորից չկեղատավին :

Յեթե զամբիկը ծնում ե կանոնավոր , այն գեղքում մտրուկը (քուռակը) գուրգ և գալիս առջև վուներով , զլուխն ել նրանց վրա դրած : Անկանոն ծնելու զեպքերը մի քանիսն են , և այս զեպքերում արզեն գործը շատ լուրջ բնույթ և ստանում : Անկանոնությունները շտկելու համար մեծ հմտություն պետք է ունենալ , թե չե անփորձության պատճառով մարդ կարող ե թե՛ զամբիկից զրկվել և թե՛ մտրուկից (քուռակից) : Այդ պատճառով , յեթե մոտեկ անասնաբույժ կամ , նրան անպարհան պետք և ողնության կանչել : Բայց վորովհետեւ ամեն գյուղում ել անասնաբույժ չկա , դրա համար ել ձիատերը վորոշ բաներ պետք և ինչը սովորի , վորպեսպի ձիուն բոլորովին անողնական վիճակում չթողնի :


### Մտրուկի գլուխն անկանոն դիրքում

51-րդ նկարի վրա ցույց և արված մտրուկի (քուռակի) անկանոն դիրքը (դիրքը կանոնավոր ե , յերբ գլուխը գրված ե զեպի առաջ ձգված առջենի վուների ծնկների վրա) : Մյուս անկանոնություններից ե , յերբ քուռակի (մտրուկի) զլուխը զանվում ե առջենի վուների տակ կամ յերբ (շատ սակագի զեպքերում ե լինում) զլուխն ընկած ե լինում մտրուկի (քուռակի) մեջ-քին , ինչպես ցույց և արված 52-րդ նկարի վրա :

Շատ հեշտ և խմանալ՝ դիմի դիրքը կանոնավո՞ր է, թէ չեւ անկանոն լինելու դեպքում մարուկի (քուռակի). վոտները բավականին դուրս յեկած են լինում, իսկ գլուխը զեռ չի յերեսում: Բայց պետք է լավ տեսնել, թէ զո՞ր վոտներն են դուրս յեկել, զորովհետեւ յերբեմն պատահում է, զոր առաջ հետեւ վոտներն են դուրս զայիս (նկ. 53): Յեթև մարուկի (քուռակի)



Նկ. 51. Մարուկին անկանոն դիրքում: Առաջին վատները ծարված են և մարուկը դուրս է գալիս գլխով.



Նկ. 52. Մարուկին անկանոն դիրքում: Գլուխը ձգված է յետ, մարուկը դուրս է գալիս առաջի վատներով.

գլուխին անկանոն դիրքը ունի, անհրաժեշտ է ձիռւն ոզնել և արդ ողնությունը պետք է ցույց տալ հնտեկյալ ձևով: — մին պետք է բարձրացնել (բայց յերբեք չպետք է խփել ձիռւն և ստիպել, զոր ինքը բարձրանա) և այնպիսի դիրքում պահել, զոր առաջի կողմը գտավակից ցած լինի: Այս դիրքում մարուկը կընա

զետի արգանդը : Այսուհետեւ պետք եւ ձեռները թաթախել ձիթով (ձիթապտղի ձիթով, վարի մասին խոսել ենք իր տեղում) և զգուշությամբ մացնել ձննդարերական անցքը : Ձեռքի մատները ձգված պիտի լինեն գեղի առաջ : Ձեռքը ծննդարերական անցքը մտցնելուց հետո պետք եւ զգուշությամբ և քնքությամբ մտրուկը (քուռակը) հրել զեղի յետ (բայց շատ քէ), վորպեսզի հնարավոր լինի ձեռքն առաջ շարժել և շշափել մտրուկի գլուխը : Յեթև մտրուկի գլուխը ծարված, ընկած լինի կողքի վրա, պետք եւ ստորին ծնոտից բռնել և գուրս քաշել առաջի վոտների վրայով :


Յեթև զլուխն առաջի վոտների տակն ընկած լինի, պետք եւ խորդյունուց (քրառ) բռնել և բարձրացնել : Տայց յեթի պարզվի, վոր զգուշն ընկած եւ ձեղքին, այսուղ արդեն գործը կրարգանա : Այս գեպքում կամ պետք եւ ձիատերն ինքը մտրուկի զլուխը բռնի ու հանի և կամ, յեթե այդ չի հաջողվում, անմիջապես անասնաբույժ կանչի, թե չեն ձին կարող եւ սատկել : Յերբեմն պատահում ե, վոր ուղղված զլուխը նորից անկանոն դիրք եւ ընդունում, այսինքն կամ ելի կողքի վրա յե ընկնում և կամ վոտքի տակն եւ մանում : Այսպիսի գեղքերում մտած հաստության կամ քիչ բարակ թուկից ճարմանդ (ուժա) պետք եւ շինել և մտրուկի զլուխը հաղցնել : 51-րդ նկարի վրա ցույց եւ տրված, թե ինչպես պիտի պատրաստել ճարմանդը : Ճարմանդի վերենի մտար կաղցնել մտրուկի տկանները, իսկ լայնությամբ ընկնող մասը կանցնի խորդյունի վրայով՝ զունչ իշուրջը, այսպիսով ճարմանդը յերասանի (սաննիք) կնմանի : Այդ ճարմանդը մտրուկի զլուխը կանոնավոր գիրքում պահելու համար ե, նրանով յերթեք և վո՞չ մի զեպքում չի կարելի զլուխը ձգել : Զետեղ եւ մոռանալ, վոր այդ ամենն անհրաժեշտ անել մեծ զգուշությամբ և հասուկ խնամքով, վորպեսզի դամրիկի ձննդարերական անցքն ու արգանդը չքերթվեն, չլինավեն : Իսկ յեթե այդ կանոնը խախավի, այն զեպքում անփույթ վերաբերմունքից և անշնորհք ողնությունից զամբիկը կրնամի միայն :

### Վոտների անկանոն դիրքը

Բացի մտրուկի դիմից, պատահում ե, վոր վոտներն ել անկանոն դիրքում են լինում : 51-րդ նկարի վրա ցույց եւ տրված մտրուկը՝ վոտների անեանոն դիրքով, յերբ նրանք ծարված են մտրուկի մարմնի տակ : Յերբեմն պատահում ե, վոր մի վոտն եւ միայն ծալված լինում : Անկանոնությունը վերացնելու համար այնպես պետք եւ վարվի, ինչպես վերեւում ցույց տրվից, այսինքն՝ ձին բարձրացնել, զգուշությամբ մտրուկը յետ տանել և իմանալ, թե ինչում ե անկանոնությունը : Յեթև վոտները ծնկներից ծալված են մտրուկի տակ, անհրաժեշտ եւ ուղղել դրա համար պետք եւ ծարված վոտը բարձրացնել զեղի վեր՝ մողավի (չօլեա) ուղղությամբ : Դրանից հետո պետք ել վոտները շտկել և գլխի հետ միասին ուղղել զեղի ձննդարերական անցք :

53-րդ նկարը ցույց եւ տալիս, վոր յերբեմն մտրուկը դուրս եւ զալիս յետենի վոտներով : Այս զեպքում ողնության կարիք չկա, վորովհետեւ զամբիկը հեղությամբ եւ ծնում, բայց համարյա միշտ ել մտրուկը սատկած և լինում : Սրա պատճառն այն ե, վոր յերբ պորոտպարանը կպչելով զամբիկը կունքի վոսկիներին սեղմակում ե, գրանից մտրուկը (քուռակը) խեղզվում ե : Յերբեմն պատահում ե, վոր մտրուկը թեև յետենի վոտներով ե գուրս գալիս, բայց մարմնի տակ (ինչպես առաջի վոտները 51-րդ

Նկարի գրաւ)։ Այսպիսի դեպքերում յեթե առաջ մարուկի հետույքն է յերեցում, նշանակում է գործը ախցան ել վատ չեւ յերբ ծննդյան ցավերն ըսկում են, պետք է ոզնել զամբիկին—մարուկի բուզերից բռնելով և գեղիկ գուրս քաշելով։ Բայց չափից զուրս ուժեղ չի կարելի քաշել, վորովհեան դամբիկի ծննդաբերական անցքը կամ արգանդը կարող է պատռվել։ Մարուկը քաշել կարելի յեւ այս ժամանակ միայն, յերբ զամբիկը ծննդյան ցավերով բռնված՝ ուժ է տալիս։ Իսկ յերբ առաջ մարուկի վազքահողերն են-




Դի. 53. Մարուկի անկանոն դիրքում. Մարուկի դուրս և գալիս յետեկի վատներավ.

զուրս գալիս, ապա մարուկին յետ տանելով՝ ձեռքով պետք և ուղղել նրա վատները։ Այսպիսի դեպքերում վատներին այսպիսի դիրք տալ, ինչպես ցույց է տրված 53-րդ նկարում, չի կարելի, արդ պատճառով վատները պիտի մեկնել փորի ուղղությամբ։ Մարուկի բուզերին սովորական ժեռյալ հանդույց են դում, և յերբ զամբիկը ծննդու ժամանակ ուժ է տալիս, թոկից ձգում են, վոր մարուկը դուրս գա։

### Մարուկի դիրքն ըստ լայնության

Պատահում են նաև այնպիսի դեպքեր, յերբ մարուկն արգանդի լայնության ուղղությամբ և ընկած լինում, այսինքն կողքով ուղղված և լինում դեպի ծննդաբերական անցքը։ Այսպիսի դեպքում պետք է զգուշաբար ճարմանդ զցել մարուկի առաջի կամ հետեւի վատներին և ձախ ձեռքով, դրսից, քիչ մոտնեցնել նրան (մարուկին) դեպի ծննդաբերական անցքը։ Միաժամանակ աջ ձեռքով արգանդի մեջ պետք է մարուկի դավակը թեքել դեպի յետ, յեթե ճարմանդն առաջի վատներին և զցած և, ընդհանակառակի, մինչև վոր մարուկը կմոտենա ծննդաբերական անցքին։ Յեթե հնարավոր է, պետք է ճարմանդն առաջի վատներին զցել, վարպեսպի մարուկը կանոնավոր դուրս գա։ Յերբ թոկի ոգնությամբ ձախ ձեռքով մարուկի զլույթը և վատները մոտեցված կլինեն ծննդաբերական անցքին, այլ ձեռքը պետք է հանել ծննդաբերական անցքից, իսկ թոկի միջոցով մարուկին պահել կանոնավոր դիրքում մինչև ծննդյան ցավերին սկսելը, վո-

բից հետո կարելի յէ մտրուկին քաշել նույն թողի ողջությամբ : Հատկապես այս դեպքը բարզությունների հետ և կապված, այնպես վոր ավելի շագ և անառնաբուժի ողջության գիմել (ինչպես և մյուս բոլոր գեղագերում) : Այդ անկանոնություններից մտրուկները համարյա թե միշտ սատկում են : Զամբիկին ողնելիս մեծ խնամքով պետք ե վերաբերվել դեպի դործը, վորպեսզի զամբիկը չվնասվի, իսկ մտրուկի (քուռակի) մասին առնձնապես շարժե մտածել, վորովնուն միննույն և սատկած և ծնվելու:



Նկ. 54. Կանոնավոր նարմանդեր՝ զամբիկը ծնելու ժամանակ սպառույթուն ցույց տալու համար.

Բե պորտապարանն ինքն և կտրվել, բայց 12 սանտիմետրից յերկար ե, այս դեպքում ել պետք և մաքուր մկրատով կտրել և հասցնել անհրաժեշտ յերարակության :

### Զամբիկի խնամքը ծնելուց հետո

Ծնելուց անմիջապես հետո զամբիկին ծղոտով պիտի մաքրել, իսկ քուռակը դնել զամբիկի առաջ՝ գլխի մոտ, վորպեսզի զամբիկը նրան լիգի: Ընկերքն (այն թաղանթը, վորի մեջ մոր արգանդում պտուղը զարգանում ե) ընկնուած և զամբիկը ծնելուց յերեսուն կամ քառասուն բովելից հետո: Մինը չպետք և ճգել կամ պոկել, վորովհետեւ նրա մի մասը կարող և մնալ արգանդում և այնուղ փոել և հոտել: Սովորաբար ընկերքն ընկնուած և ինքը ձիռ շարժումներից: Այցունով կեզտուաված շամքարը և ընկերքն անմիջեպես պետք և հեռացնել ախոռատնից և անմիջեպես նոր ծղոտ փոել, բայց սովորականից մի քիչ ավելի:

Ենք զամբիկը քուռակին միզելը վերջացնի, պետք և թողնել, վոր քուռակը մոտենա ձիռ կրծքին, իսկ յեթե քուռակը թույլ ե և չի կարողանուած ինքը մոտենալ, այն զեպջում անհրաժեշտ և ոգնել նրան: Զամբիկի առաջին կտրքը չպետք է կթել, վորովհետեւ նա շատ ողտակար և քուռակի (մտրուկի): սատածոցի համար: Ծնելուց հետո մի ամրող շարաթ զամբիկը լծել և առհասարակ բանեցնել չի կարելի, իսկ յեթե հնարավորություն կա, շատ լավ կլինի, յեթե նո յերկրորդ շարաթն ել հանգստանա կամ գոնե ծանր աշխատանք չկատարի: Զիւ համար վնասակար ե, յեթե ամեն տարի ծնի, վորովհետեւ նա համարյա թե ամրող տարին ծանր աշխատանքի մեջ և լինուած, բացի դրանից, յեթե ձին ամեն տարի ծնուած ե, քուռակներն ել (մտրուկները) թույլ են:

Դիմում : Այդ պատճառով ավելի լավ և այնպես անել, վոր զամբիկը ծնի վոյ թե ամեն տարի, այլ յերկու տարին մի անգամ : Այս համարամանքը կարող է ամեռնառ համարվել, բայց դրա փախարեն զամբիկն ավելի յերկոր կոր ժամա, իսկ չուռակներն ել (մարուկները) ավելի արժեք կունենան :

## XI ԳԼՈՒԽ.

### ՄՈՒՏՐՈՒԿԻ (ՔՈՒՐԱԿԻ) ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ՆՐԱ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

#### Մոր կրծով (կարով) կերակրելը

Առաջին ամիսների ընթացքում մարուկի առողջությունն էր մոր սննդից և կախված : Այդ պատճառով անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես պետք է կերակրել նոր ծնած զամբիկին : Զամբիկին կերը տալու ժամանակը մուռամ և սովորականը (առևս «Չիուն կերակրելը» գլուխը), բայց կերի տեսակը և չափերը պետք է փոփոխվին : Նշելուց հետո ամրող տառ ջն ամսում զամբիկին չի կարելի վարսակ տալ : Վարսակի փոխարեն պետք է ցորենալյուրի թեփ տալ, այն եւ որական 5 կիլոգրամ : Բացի դրանից պիտի ավելացնել գարմանի քանակը և 400 գրամ այսուր շաղ տալ դարմանի վրա : Վարսակը չափարանց վատ և ազդում զամբիկի կաթի վրա, իսկ կաթի միջոցով՝ նաև քուռակի (մարուկի) վրա, այդ պատճառով լավ կլինի զամբիկին վարսակ չտալ, քանի զեռ մարուկը ծծում է նրան : Բայց զժքախտաբար, այդ հնարավոր չե անել, վորովհետեւ զամբիկը պիտի բանի, իսկ յեթե նա բանի առանց վարսակի, այն դեպքում ուժերը կսպառի, և քուռակի համար ավելի ծանր վիճակ կստեղծվի, քանի վոր ուժասպառ զամբիկը բավարար քանակի կաթ չի կարող տալ :

Եերկրորդ ամսում կարելի յե դարմանի վրա վարսակ շաղ տալ, բայց քիչ-քիչ՝ սկսելով 400-800 գրամից, և 800 գրամ տալու դեպքում պակասուցնել գարմանի քանակը . յերկու որից հետո կարելի յե դարմայլ 1 կ.-գրամ 200 գրամ վարսակ ավելացնել, բայց նույնքան գարման պակասցնել . այսուհետեւ վարսակի քանակն որական 400 գր. պիտի ավելացնել, մինչև վոր որական կերարաժեն վարսակը հասնի 5 կիլոգրամի : Մյուս կերը, մինչև մարուկը ծծից կարելը, պիտի թողնել անփոփոխ, իսկ ծծից կտրելուց հետո այլևս չպետք եւ ալյուրի թեփ տալ և պետք է անցնել սովորական կերին : Նույնիսկ ավելի լավ և ալյուրի թեփ տալը դադարեցնել մարուկը ծծից կտրելուց մեկ շարաթ տառջ : Այս կանոններով զեկալարվելը չափարանց անհրաժեշտ և և կարեռը : Գյուղական տնտեսության մեջ աշխատանքն այսպես և ընթանում, վոր մի որն ամրող տարի յե կերակրում : Մոտավորապես նույնը կարելի յե ասել նաև մարուկի ժամանակամբ նաև այսուը, վոր արվել և նրա վրա, յերպ նու զեռ մոր արդանդումն երև և այնուհետեւ ել նրա կյանքի առաջին յերկու տարիներում, կարելի յե հետո սոսանալ, յերբ նու մեծանան : Կարճ սոսամ՝ յեթե քուռակին մինչեւ յերկու տարի վատ կերակրեն և վատ ել ինամենա, ապա մինչույն և, ինչպիսի արտադրողներից ել նու լինի, առանձին ոգուտ չի կարող տալ :

#### Մծկեր մտրուկների հիվանդությունները

Քուռակի (մարուկի) խնամքն առաջին յերկու տարին պետք է տարպի հատուկ ուշադրությամբ : Եերեմն պատահում է, վոր քուռակը ծնվում է

անզնաս և առաջ, բայց հանկարծ նու հիմանդանում եւ Նա միանդամից այնպիս ծանր և հիմանդանում, վոր այլիս չի կարողանում կանգնել, վուներն ու ականջները ստում են և շղաձղություն և առաջանում: Քուռակին (մտրուկը) այս վիճակին յինթարկվում եւ փորկապությունից, վոր հանախ պատահում է նրա կրանքի առաջին որերում: Եւթե նկատվում է, վոր քուռակի կուն (թրիքը) զուրս չի գալիս կամ զուրս և զալիս, բայց մեծ դժվարությամբ, ապա զու սապոնաջրով պետք ե զրեխիկ (ոքնա, դաստուր, ԷԼԵԿՏԻՐ) դինել: Դրեխիկը զրգում է հետեւյալ մեռվ — ուստի խոզովակ և ապակյա ծայրակալ (ԱԿԱՆԵՎԻՒ) ունեցող հասուկ ամանի մեջ յերեք բաժակ տաք ջուր (նոր կթած կաթի տաքության) են ածում և ջրի մեջ մի փոքրիկ կոսոր սապոն զցում: Եւրբ սապոնը լուծվում է, և ջուրը նրանից պղոտրվում է, այն ժամանակ ծայրակալը զնում են քուռակի (մտրուկի) հետանցքում, իսկ ջրամանը բարձրացնում և սպասում են, մինչև վոր ամբողջ ջուրն ամանից անցնի քուռակի աղիքները: Եւրբ ամանը գալուրկիլ, ծայրակալը պիտի հանել և մաքուր ջրով լվանալ: Դրանով ել զործը վերջանում է, մնում ե միայն սպասել, վոր քուռակը թրիք: Դրեխիկի ամանն անհրաժեշտ և տնտեսության համար. նա անհրաժեշտ և մարզու համար փորկապության դեպքում, անհրաժեշտ և և քուռակի համար, ինչպես տեսանք քիչ առաջ և վերջապես անհրաժեշտ և տարիքով միու համար, յերբ նա աղիքների խիթ (Ճակուն, ԿՈՒՆԵ) ունի: Այդ ամանը թանգ չեն, ընդամենը մեկ ու կես ոռուրի արժե և կարելի յե զնել ամեն մի զեղատնից: Եւթե զրեխիկը ժամանակին չի զրիւ, և քուռակը, — ինչպես վերելում ասացինք, — այլևս վոտի վրա չի կարողանում մնալ, անհրաժեշտ և նրա բերանն ածել մի զդալ կտավատի յուղ (Ճեթ) կամ լուծողական (զենադիքը չուղ) և այնպես անել, վոր քուռակը կուլ տա: Դրա համար պետք ե քուռակին վոտի կանգնեցնել, գուշակը զեղի վեր բարձրացնել, բերանը բաց անել ու յուղը մեխն ածել և միաժամանակ քթածակերը սեղմել, վորպեսզի քուռակին ստիպված լինի յուղը կուլ տալ կամ թե մեռքով թեթեակի տրորել կոկորդը: Դրանից հետո քուռակին կարելի յե վոտների վրա պահել, իսկ յեթե վոտները սառչեն, պետք ե տրորել ծղոտով: Բացի փորկապությունից, քուռակիները համախ փորլուծություն են ունենում: Փորլուծությունն առաջ և զալիս զամբիկի կերը հանկած փորելուց այսպես, յերբ զամբիկին չոր կերեր տալուց հետո հանկարծ սկսում են միայն կանաչ խոտ տալ, կամ միանգամից չառ վարսակ են տալիս, մինչեւ դրանից առաջ բոլորովին վարսակ տալիս չեն յեղել և, վերջապես, քուռակի հետ փորլուծություն կարող ե պատահել, յեթե մոր կաթը թե՛ առատ և և թե՛ չափազանց յուղալի: Առաջին յերկու դեպքից կարելի յե խուսափել, յեթե զամբիկին կերակրեն այնպես, ինչպես այդ մասին արդեն խոսել ենք իր տեղում, իսկ յերբորդ դեպքում պետք ե զամբիկի ավելորդ կաթը:

### Ծծկեր մարուկի խնամքը

Այն ախոռատունը, վորտեղ քուռակն (մտրուկն) և գանգում, պետք ե տաք լինի: Յուրաք չենքից նույնպես կարող ե փորլուծություն, հողացալ և ընդհանուր մրսածություն առաջանալ: Այս բոլորից խուսափելու համար պետք ե մոռըրի առաջը, վորտեղ կանգնում կամ նստում և քուռակը (մտրուկը), ավելի ծղոտ փոնել և լավ նայել, վոր պատերից քամիչ չփչի:

Անշարժ գրության մեջ չպետք է պահել քուռակը . լավ յեղանակին նրան անպայման գուրս պիտի բերել բակը կամ այնպիսի մի տեղ, վորը պաշտպանված և խօսու քամիներից :

Առաջին մազը (ինչպես ասում են՝ «Հարամ մազ») թափվելու շրջանում քուռակին շատ գուր և գալիս, յերբ նրան քորում են: Այդ հարմար մոմենտը մեռքից չպիտի տալ, աշխատելով քուռակին վարժեցնել մաքրության և ընդհանրապես ընոտելացնել, վոր շխուռափի մարդուց: Քուռակին ել անհրաժեշտ և մաքրել (թիմարել) այնպես, ինչպես հասուն ձիերին, բայց ձիասանր (զոշու) չպետք ե գործածել, վորպեսզի նրա նուրիք մաշկը չանհանդատանու: Մաքրելու (թիմարելու) ժամանակի հերթով պետք ե բարձրացնել բոլոր վուսները, սմբակներից թրիքը հեռացնել և փայտի մողիկով խփել սմբակներին, վորպեսզի քուռակն առաջուց վարժվի պայտելուն: Բացի դրանից պետ ե կարգի բերել քուռակի սմբակները, այսինքն վարպետի (ոպայտարի) միջնորդ կտրել, հեռացնել սմբակի ավելորդ աճած յեղներանյութը. քուռակի սմբակներն այս ձեռով անհրաժեշտ ե կարգի բերել գոնեն յերկու ամիսը մի անգամ: Եեթե քուռակի սմբակներն այս ձեռով կարգի չըրերգնեն, ապա կարող ե յեղներանյութը կոսրվել և, բացի զբանից, կոճերը և ծնկները կախ ընկնել, իսկ այդ հանգամանքը վատ կազդի քուռակի թի՛ վորակի և թի՛ արժեքի վրա:

Այն ժամանակ, յերբ առաջին բուրդը տալիս ե, լավ կլինի փափուկ նյութից (կանեփի թելից) քուռակի գլխին հարմար սանձ (նոխտա) պատրաստել: Սանձը պետք ե հազցնել ժամանակ առ ժամանակ. նույնիսկ կերելի յե սանձը (նոխտան) թողնել քուռակի գլխին, իսկ յերբեմն թոկ ավելացնել սանձին և քուռակին կամաց-կամաց թի՛ կապի վարժեցնել և թի՛ մարդու հետեւց զնալուն:

Եերբ քուռակի ատամները գուրս են գալիս, նա ինքն և սկսում վարսակ և խոտ ուտելուն վարժվել՝ մոր առաջից կրելով այդ կերերը: Հինգերորդ ամսում արդեն պետք ե քուռակին առանձին վարսակ և խոտ տալ, ի հարկե, ուկելով փոքր չափերից (որական մոտավորապես 400 գրամ վարսակ և նույնքան ել խոտ) և հետզհետե ավելացնելով այնպես, վոր 2-րդ շարաթվականը կերպ կերարաբենը լինի 2 կիլոգրամ վարսակ և նույնքան ել խոտ: Դրա համար ախոռատանը պետք ե քուռակի հասակին հարմար առանձին մասուր պատրաստել և մի տաշտ զնել ջրի համար: Թի՛ մոուրը և թի՛ տաշտը մաքուր պիտի պահեն և ամեն անգամ կեր ու ջուր տալուց առաջ մնացորդները պետք ե հեռացնել: Քուռակին կեր տալիս պետք ե զամբիկը կապիչած լինի, վորպեսզի քուռակի կերը չուտի: Զպետք ե մոունալ, վոր քուռակի կերն անպայման լավ վորակ պիտի ունենա:

### Մտրուկը ծծից կտրելը

Քուռակը ծծից պիտի կտրել վեցերորդ ամսում: Եեթե այստեղ ցույց տված կանոնն անփոփոխ գործադրվի, այն ժամանակ քուռակը բուլորովին չի վնասվի ծծից կտրելու պատճառով: Սիսալ կլինի, յեթե թողնենք, վոր քուռակը մորը վեց ամսից ավելի ծծի, վորովհետեւ դրանից մայրը չափազանց ուժառապատ ե լինում, մինչեւ աշնանը նա ծանր աշխատանք պիտի կատարէ և առհասարակ անհրաժեշտ ե, վոր ձմեռն սկավելիս մայրն ուժերը հավաքան լինի:

Քուռակը ծծից պետք ե կտրել միանգամից և վո'չ թի՛ այսպես, ինչպես

անում են գյուղացիներից շատերը, յերբ ցերեկը թույլ չեն տալիս, վոր քուռակը մորը մոտենա, իսկ զիշերը յերկուակին ել մի տեղ են պահում: Այս ձեզ ավելորդ տեղը տանջում, զղայնացնում և թե՛ զամբիկին և թե՛ քուռակին: Վոչ մի ոպուտ չկա, յեթե մենք քուռակին վարժեցնենք կերին առաջուց. ընդհակառակը, ուս վնասակար և թե՛ այն պատճառով, վոր մոր կուրծը կարող է հիվանդանալ և թե՛ այն պատճառով, վոր քուռակը՝ աղանդեն ծծելով մոր կաթը՝ կարող և վնասվել:

Մեծից կտրելուց հետո քուռակին պետք է առանձին շենք (տեղ) հատկացնել, վորպեսզի նա չկարողանա տեսնել վո՛չ իր մորը և վո՛չ ել ուրիշ ձիերի: Այդ ժամանակ մտրուկի (քուռակի) հետ շատ քնքույշ պիտի վարվել. ծծից կտրելուց հետո սովորաբար նա շատ գրգռված և անհանդիսա և լինում և կոշտ ու կոպիտ վարվելու գեպքում կարող է ընդմիշտ չար ու վախկոտ գառնալ:

Մեկ ու կես կամ յերկու շաբաթ անցնելուց հետո մտրուկը (քուռակը) մորը մոռանում է և վարժվում է կյանքին. այստեղ արգեն պետք է նրան լավ կերպելու և հնարավորություն տալ ամեն որ դուրս լինելու, վորպեսզի թե՛ ուժերը զարգացնի և թե՛ կանոնավորի քայլվածքը:

Բացի զրանից, չպետք է մոռանալ, վոր անհրաժեշտ ու որական յերկու, իսկ ծայրահեղ դեպքում մի անզամ մաքրել քուռակը: Մեծից կտրելուց հետո պետք է քուռակի պոչն ու բաշը խուզել և աստիճանաբար, մազն աճելու հետ միասին, ուղղել մինչև մեկ տարեկան հասակը, իսկ այնուհետև թողնել, վոր մազն աճի անարգել: Այսպես խուզելու չնորհիվ պոչի ու բաշի մազը խոտանում է:

### Մտրուկին կապի և աշխատանքի վարժեցնելը

